

ՊԱՏԻԺԸ ԿՐԵԼՈՒՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ



**ՊԱՏԻԺԸ ԿՐԵԼՈՒՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ
ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ

Քաղաքացիական հասարակության ինստիտուտ
Երևան – 2012

Հետազոտությունը իրականացվել է «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» (ՔՀԻ) հասարակական կազմակերպության կողմից:

Արման Դանիելյան, խմբի ղեկավար
Արման Զրվանդյան, իրավաբան
Տաթևիկ Դարիբյան, իրավաբան
Սիրանուշ Սահակյան, իրավաբան
Յուլիանա Մելքունյան, սոցիոլոգ

Հեղինակները շնորհակալություն են հայտնում ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական Նիկոլայ Առուստամյանին համագործակցության համար:

Ձեկույցը պատրաստվել և հրատարակվել է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի աջակցությամբ: Սույն հրատարակման մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներին են և հնարավոր է, որ չհամընկնեն ԵԱՀԿ-ի տեսակետների հետ:

ISBN 978-92-9235-893-8

Քաղաքացիական հասարակության ինստիտուտ

ՀՀ Երևան 0025, Այգեստան 11 փողոց, 43 տուն

Հեռ.՝ (+37410) 574317, ֆաքս՝ (+37410) 559634

csi@csi.am, www.csi.am, www.hra.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	4
1. Պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը Հայաստանում	6
2. Պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշում կայացնող մարմինները և ընթացակարգերը	14
2.1. Քրեակատարողական հիմնարկը	14
2.2. Անկախ հանձնաժողովը	15
2.3. Դատարանը	17
3. Պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշում կայացնող մարմինները և ընթացակարգերը. միջազգային փորձ	19
4. Պայմանական վաղաժամկետ ազատման նպատակները և չափանիշները	29
4.1. Պայմանական վաղաժամկետ ազատման նպատակները և դրանց ընկալումը Հայաստանում	29
4.2. Պայմանական վաղաժամկետ ազատման չափանիշները	34
4.2.1. Անազատության ընթացքում դատապարտյալի դրսևորած վարքագծի գնահատումը	38
4.2.2. Պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացված դատապարտյալի հետագա վարքագծի կանխատեսումը	41
4.3. Տուժողին պատճառած վնասը հարթելը	48
5. Պայմանական վաղաժամկետ ազատման պայմանները փոփոխելը և ազատումը վերացնելը	51
6. Եզրահանգումներ	54
7. Առաջարկություններ	59

ՆԱԽԱԲԱՆ

2011թ. մայիս-դեկտեմբեր ամիսներին Քաղաքացիական հասարակության ինստիտուտը ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացրել է ուսումնասիրություն՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի վերաբերյալ: Ուսումնասիրության իրականացման հիմնական նպատակն է՝ նպաստել Հայաստանում պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի կայացմանն ու զարգացմանը՝ գործող համակարգի և միջազգային փորձի ուսումնասիրության ու տեղական կարիքների գնահատման արդյունքում առաջարկների մշակման և դրանց հանրայնացման միջոցով:

Ուսումնասիրությունը հնարավորություն տվեց վերհանել պայմանական վաղաժամկետ ազատման համակարգին վերաբերող մի շարք հիմնախնդիրներ: Դրանք առնչվում են պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը կարգավորող իրավական նորմերին, սկզբունքներին և չափանիշներին, ինչպես նաև՝ որոշում կայացնող մարմինների կազմին և աշխատանքներին: Որպես առանձին խնդիր է արձանագրվել Հայաստանում պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի ընկալումը:

ՔՀԻ-ի մասնագետներն ուսումնասիրել են պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը կարգավորող օրենսդրությունը, որի արդյունքում բացահայտվել են մի շարք հիմնախնդիրներ:

Հետազոտության շրջանակներում հարցազրույցներ են անցկացվել պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի հետ առնչվող պաշտոնատար անձանց և մասնագետների հետ, որոնց թվում՝ դատավորներ, փաստաբաններ, անկախ հանձնաժողովների ներկայիս և նախկին անդամներ: Ընդհանուր առմամբ հարցվել է 17 հոգի: Հարցազրույցներն իրականացվել են հատուկ մշակված հարցաշարի հիման վրա: Պահպանվել է հարցվածների անանունությունը:

Զեկույցը մշակելիս ուսումնասիրվել են մի շարք արևմտյան երկրներում պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտու-

տի զանազան դրսևորումները, գնահատվել են դրանց դրական և բացասական կողմերը՝ Հայաստանում դրանց կիրառելիության տեսանկյունից, ինչպես նաև՝ այն արժեքները և մոտեցումները, որոնց վրա հիմնված է այդ ինստիտուտը: Ձեկույցը պարունակում է մի շարք մանրամասն մշակված առաջարկներ, որոնց նպատակն է աջակցել ՀՀ-ում պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ոլորտում քաղաքականություն մշակող պաշտոնատար անձանց՝ պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի զարգացմանն ու բարեփոխմանն ուղղված աշխատանքներում:

Ձեկույցը բաղկացած է 7 մասից: *Առաջին* մասում ներկայացվում է ՀՀ-ում գործող պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը:

Երկրորդ մասում արծանագրվում են Հայաստանում պայմանական վաղաժամկետ ազատման գործող համակարգի խնդիրները, ներառյալ՝ օրենսդրության և պրակտիկայի ուսումնասիրության արդյունքները:

Երրորդ մասում ներկայացվում է մի շարք այլ երկրներում պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշում կայացնող մարմինների և ընթացակարգերի նկարագրությունը և փորձը:

Ձեկույցի *չորրորդ* մասում զետեղված է պայմանական վաղաժամկետ ազատման նպատակների և չափանիշների վերաբերյալ վերլուծությունը: Այս հատվածում, մասնավորապես, ներկայացվում է Հայաստանում պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի նպատակների ընկալման առանձնահատկությունների ամփոփումը, ինչպես նաև՝ դրանց ամրագրումն այլ երկրների համակարգերում և միջազգային փաստաթղթերում: Ներկայացվում են նաև այլ երկրներում որդեգրված և միջազգային փաստաթղթերում ամրագրված չափանիշների, ինչպես նաև՝ կրկին հանցանք կատարելու ռիսկի գնահատման մեխանիզմների նկարագրությունը: Չորրորդ մասը եզրափակվում է՝ պայմանական վաղաժամկետ ազատման համակարգում տուժողին պատճառած վնասի հատուցման ինստիտուտի դրսևորման ձևերի և դերի մասին վերլուծությամբ:

Զեկույցի *հինգերորդ* մասում քննարկվում են պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշումը կայացնելիս պայմանների նշանակման, այդ պայմանները փոփոխելու և վերացնելու կարգին ու սկզբունքներին առնչվող խնդիրները:

Վեցերորդ մասում շարադրվել են ՔՀ-ի եզրահանգումները, որոնք ամփոփում են կատարված ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև՝ Հայաստանում պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի հետագա զարգացման ուղիների վերաբերյալ ՔՀ-ի պատկերացումները:

Վերջին *յոթերորդ* մասում, շարադրված են ՀՀ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի բարեփոխումներին ուղղված առաջարկները:

ՔՀ-ի մասնագետների կարծիքով՝ այս զեկույցը կծառայի որպես պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի բարեփոխումների ծրագրի մշակման ու իրականացման խթան և օգտակար կիրառական գաղափարների աղբյուր: ՔՀ-ն իր պատրաստակամությունն է հայտնում Հայաստանում պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի բարեփոխումների բոլոր փուլերում հետազոտական աշխատանքներով աջակցել քաղաքականություն մշակողներին:

1. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը կարգավորվում է ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-116-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ նախագահի 2006 թ. հուլիսի 31-ի ՆՀ-163-Ն հրամանագրի, ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 24-ի թիվ 1304-Ն որոշման, ՀՀ արդարադատության նախարարի 2005 թ. սեպտեմբերի 8-ի թիվ ՔՀ-46-Ն հրամանի դրույթների համաձայն:

«Քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում *պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը* մեկամսյա ժամկետում պարտադիր լսում է կարգապահական տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ներկայացման հարցը:

Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու մասին որոշում կայացնելու դեպքում որոշումը ներկայացնում է անկախ հանձնաժողովի քննարկմանը:

Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը միջնորդագիր է ներկայացնում դատարան՝ միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ՝ միայն անկախ հանձնաժողովի հավանությունն ստանալու դեպքում:

«Հ կառավարության 2006 թ. օգոստոսի 24-ի թիվ 1304-Ն որոշման հիման վրա հաստատվում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցերը պատիժը կատարող հիմնարկի կողմից քննարկման կարգը:

Քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացն իրականացնում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմը՝ հանձնաժողովային կարգով: Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու նպատակով ստեղծվում է վարչական հանձնաժողով (վարչական հանձնաժողով) հետևյալ կազմով՝

1. հանձնաժողովի նախագահ՝ քրեակատարողական հիմնարկի պետ,

2. հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալ (սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները համակարգող),
3. հանձնաժողովի քարտուղար՝ քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձանց և դատապարտյալների հաշվառման ստորաբաժանման ղեկավար,
4. անդամներ՝
 - ա) քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալներ,
 - բ) քրեակատարողական հիմնարկի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ստորաբաժանման ղեկավար,
 - գ) քրեակատարողական հիմնարկի դատապարտյալների բժշկական սպասարկման ստորաբաժանման ղեկավար,
 - դ) քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման ստորաբաժանման ղեկավար:

Հանձնաժողովի քարտուղարը չի օգտվում ծայնի իրավունքից:

Վարչական հանձնաժողովի որոշմամբ հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել նաև այլ քրեակատարողական ծառայողներ, որոնց թիվը չպետք է լինի երկուսից ավելի: Վարչական հանձնաժողովը մեկամսյա ժամկետում պարտադիր հրավիրում է նիստ: Նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հարցի քննարկումը տեղի է ունենում դատապարտյալի ներկայությամբ՝ նրա ցանկությամբ: Վարչական հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ կարող է հայտնել դատապարտյալի մասին իր կարծիքը: Դատապարտյալը կարող է տալ բացատրություններ՝ իրեն վերաբերող հարցերի քննարկման ժամանակ: Որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, նիստին ներկա գտնվող վարչական հանձնաժողովի անդամների ծայների մեծամասնությամբ: Քվեարկությունը տեղի է ունենում դատապարտյալի բացակայությամբ:

Դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելու համար պարտադիր են հետևյալ պայմանները՝

- ա) դատապարտյալի՝ օրենքով սահմանված պատժի նվազագույն ժամկետը կրելը,
- բ) դատապարտյալի գրավոր համաձայնությունը,
- գ) դատապարտյալի դրական բնութագիրը,
- դ) տույժ չունենալը¹:

Նաև հաշվի են առնվում դատապարտյալի հետ իրականացված սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների, ուղղման միջոցների ներգործության արդյունքները²:

Յուրաքանչյուր դատապարտյալի վերաբերյալ խմբի ղեկավարը կազմում է բնութագիր՝ հաշվի առնելով հիմնարկի տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների (անվտանգության ապահովման, նյութակենցաղային ապահովման, բուժսպասարկման բաժիններ) եզրակացությունները, և հանձնաժողովին ներկայացնում է պատիժը կրելու ընթացքում դատապարտյալի կողմից՝ օրենսդրության պահանջները պահպանելու վիճակը (դատապարտյալի նկատմամբ կիրառված խրախուսանքները, տույժերը, դրանց պատճառները, կարգապահական խախտումների կանխման և նվազեցման ուղղությամբ իրականացված աշխատանքները, դատապարտյալի վարքագիծի փոփոխությունները կամ դրանց բացակայությունը, ռիսկայնության և ուղղման աստիճանը, ազատվելուց հետո բնակարանով (կացարանով) ապահովվածության, ընտանիքի անդամների կողմից դատապարտյալի նկատմամբ ունեցած վերաբերմունքի և այլ բնութագրող հանգամանքներ), նրա հետ իրականացված սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների արդյունքները, աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական և նման այլ զբաղվածության ձևերին դատապարտյալի մասնակցությունը, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումների կողմից տրված եզրակացությունները³:

Եթե միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ վարչական հանձնա-

1 ՀՀ արդարադատության նախարարի 2005 թ. սեպտեմբերի 8-ի թիվ ԲՀ-46-Ն հրամանի 5-րդ կետ:

2 Նույն տեղում, կետ 6:

3 Նույն տեղում, կետ 11:

ժողովն ընդունել է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին միջնորդագիր ներկայացնելու վերաբերյալ որոշում, վարչական հանձնաժողովի նախագահը որոշումը եռօրյա ժամկետում ուղարկում է անկախ հանձնաժողովին՝ հավանության⁴:

ՀՀ նախագահի 2006 թ. հուլիսի 31-ի ՆՀ-163-Ն հրամանագրով սահմանվում են Անկախ հանձնաժողովների կազմավորման և գործունեության կարգը, անկախ հանձնաժողովների կազմերը, գործունեության ֆինանսավորումը: Անկախ հանձնաժողովների կազմերում ընդգրկվում են համապատասխան գերատեսչությունների և հասարակության ներկայացուցիչներ: Անկախ հանձնաժողովների անհատական կազմերը, ըստ սպասարկվող քրեակատարողական հիմնարկների ցանկի, հաստատում է Հայաստանի Հանրապետության նախագահը⁵: Անկախ հանձնաժողովները բաղկացած են 8 անդամից, մեծամասնություն են կազմում տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչները՝ ՀՀ ոստիկանություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ նախագահի աշխատակազմ, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչություն: Նաև ներառվում են մեկական հանրային խորհրդի անդամ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից և Երևանի պետական համալսարանի հոգեբանության տեսության և պատմության ամբիոնից ներկայացուցիչ: Հանձնաժողովի նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ հիմնարկի վարչակազմի որոշմանը հավանություն տալու կամ չտալու վերաբերյալ որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ զաղտնի քվեարկությամբ:

4 ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 24-ի թիվ 1304-Ն որոշման 12-րդ կետ:

5 ՀՀ նախագահի 2006 թ. հուլիսի 31-ի հրամանագիրը «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովների կազմավորման և գործունեության կարգը սահմանելու մասին», կետ 3:

Հանձնաժողովի աշխատակարգային որոշմամբ ստեղծվում են հանձնաժողովի առնվազն երկու անդամներից կազմված ենթահանձնաժողովներ: Ենթահանձնաժողովն այցելում է պատիժը կատարող հիմնարկ, ծանոթանում դատապարտյալի անձնական գործին, մեկուսի հանդիպում նրա հետ, անհրաժեշտության դեպքում հանդիպում է նաև պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի հետ: Հանձնաժողովի նիստի ժամանակ ենթահանձնաժողովի անդամները ներկայացնում են իրենց կարծիքները, որից հետո անցկացվում է հարցի քննարկում: Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը պայմանական վաղաժամկետ ազատելու մասին միջնորդագիր ներկայացնելու վերաբերյալ որոշումն ուղարկում է անկախ հանձնաժողովին՝ կցելով դատապարտյալի վերաբերյալ բնութագիրը: Անկախ հանձնաժողովն իր քննարկմանը ներկայացված հարցի վերաբերյալ կարող է պահանջել լրացուցիչ նյութեր, կատարել հարցումներ: Հանձնաժողովը որոշումն ընդունելուց հետո այն ուղարկում է հիմնարկի վարչակազմ: Անկախ հանձնաժողովի՝ հավանություն տալու մասին որոշումն ստանալու դեպքում վարչական հանձնաժողովը 5-օրյա ժամկետում դատարան ներկայացնելու նպատակով կազմում է միջնորդագիր, որում, ի թիվս այլ տվյալների, նշվում է դատապարտյալի դատվածությունների առկայությունը կամ բացակայությունը, նախկինում պատժից պայմանական վաղաժամկետ ազատման մասին, ինչպես նաև տեղեկություններ պատիժը կրելու ընթացքում դատապարտյալի դրսևորած վարքագծի, ուղղված լինելու հանգամանքի վերաբերյալ⁶:


ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: Պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել միայն, եթե դատապարտյալը փաստացի կրել է ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի երրորդ մասով սահմանված պատժի մասը: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս

6 ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 24-ի թիվ 1304-Ն որոշման 14-րդ կետ:

դատարանը հաշվի է առնում նաև դատապարտվածի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը:

Ստորև բերված գծապատկերը ցույց է տալիս ՔԿՀ վարչական հանձնաժողովների կողմից քննարկման արդյունքում անկախ հանձնաժողովին ներկայացված դատապարտյալների և դատարանի որոշմամբ ազատված դատապարտյալների տոկոսների դինամիկան⁷:

Գծապատկեր 1.




Գծապատկերից հստակ երևում է, որ վերջին տարիների ընթացքում վարչական հանձնաժողովների կողմից անկախ հանձնաժողովին ներկայացված դատապարտյալների տոկոսը անշեղորեն նվազում է՝ 85-ից հասնելով 26: Ենթադրաբար, դրա պատ-

7 Աղյուսակները կազմվել են ՀՀ ԱՆ 2011 թ. ապրիլի 27-ին տրամադրած վիճակագրական տվյալների հիման վրա:

Ճառն այն է, որ վարչական հանձնաժողովներն իրենց որոշումներում առաջնորդվում են անկախ հանձնաժողովի «չափանիշներով» և չեն ներկայացնում դատապարտյալների այն կատեգորիաներին, որոնք, որպես կանոն, մերժվում են անկախ հանձնաժողովների կողմից: Չնայած այսպիսի «զտմանը», անկախ հանձնաժողովը հիմնականում հավանություն է տալիս իրեն ներկայացված դատապարտյալների մոտ 30 տոկոսին⁸ (տես՝ Գծապատկեր 2): Ակնհայտ է, որ պայմանական վաղաժամկետ ազատվողների մասնաբաժինը տարեցտարի նվազում է. եթե 2006 թվականին ազատվել էին պայմանական վաղաժամկետ ազատվելու հնարավորություն ունեցող դատապարտյալների 22 տոկոսը, ապա 2010 թվականին՝ միայն 7 տոկոսը:

Գծապատկեր 2. Անկախ հանձնաժողովին պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացված դատապարտյալներից դատարանի որոշմամբ ազատվել է



8 Հաշվի է առնված, որ դատարանների կողմից բացասական որոշումները հազվադեպ են և էական ազդեցություն չունեն վիճակագրության վրա:

2. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

ՀՀ-ում պայմանական վաղաժամկետ ազատման որոշումը կայացվում է հետևյալ երեք հանրային մարմինների մասնակցությամբ՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմ, անկախ հանձնաժողով և դատարան: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշում կայացնող նման եռաստիճան համակարգն առաջացնում է գործողությունների և ընթացակարգերի կրկնություններ և որոշումների կայացման ընթացքի ձգձգումներ: Ուստի անհրաժեշտ է վերանայել որոշում կայացնող մարմինների գործառույթները և պարզեցնել համակարգը:

2.1. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ

Քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին կետի առաջին մասի համաձայն՝ «պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը մեկամսյա ժամկետում պարտադիր լսում է կարգապահական տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ... ներկայացման հարցը»: Նշված դրույթից հետևում է, որ որոշումների կայացման եռաստիճան համակարգում արդեն ՔԿՀ մակարդակում դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատման հարցը կարող է բացասական լուծում ստանալ: ՔԿՀ-ն պայմանական վաղաժամկետ ազատման համակարգում ունի կարևոր դերակատարում, քանի որ դատապարտյալը պահվում է այնտեղ, և ՔԿՀ-ն պարտավոր է հետևել յուրաքանչյուր դատապարտյալի առաջընթացին, հայտնաբերել նրա կարիքները և համապատասխանաբար իրականացնել աշխատանքներ: Կասկածից վեր է, որ ՔԿՀ-ն տիրապետում է դատապարտյալին առնչվող այնպիսի տեղեկությունների, որոնք կարող են կարևոր նշանակություն ունենալ դատապարտյալի

պայմանական վաղաժամկետ ազատման հարցը լուծելիս: Սակայն այլ հարց է, թե արդյոք քաղաքականության տեսանկյունից ճիշտ է, որ նույն մարմինը, որտեղ պահվում է դատապարտյալը, որոշի, թե արդյոք պե՞տք է դատապարտյալին ներկայացնել պայմանական վաղաժամկետ ազատման, թե՞ ոչ: Ջանազան չարաշահումներից խուսափելու և կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է, որ դատապարտյալին պահող ու նրա վարքագիծը գնահատող և դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատման (նույնիսկ ներկայացնելու) վերաբերյալ որոշում կայացնող մարմինը նույնը չլինի: Ավելին՝ դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատման հարցը լուծելիս հաճախ անհրաժեշտ են լինում այնպիսի տեղեկություններ, որոնք ՔԿՀ-ն չի կարող ձեռք բերել, օրինակ՝ ազատվելու դեպքում դատապարտյալի կողմից կրկին հանցանք կատարելու հավանականության կանխատեսումը, որը մի շարք երկրներում իրականացնում են պրոբացիայի ծառայությունները:

2.2. ԱՆԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հանրային գործառույթներ իրականացնող ցանկացած մարմնի ստեղծումը պետք է պայմանավորված լինի որոշակի նպատակների և խնդիրների իրականացման անհրաժեշտությամբ: Ի՞նչ նպատակների իրականացման, խնդիրների լուծման համար է ստեղծվել անկախ հանձնաժողովը: Կարելի է ենթադրել, որ անկախ հանձնաժողովը ստեղծվել է համակարգում առկա կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ անկախ հանձնաժողովը լուծում է նշված հիմնախնդիրը՝ կոռուպցիոն ռիսկերը կտրուկ նվազել են, սակայն այլ խնդիրներ, որոնք հանձնաժողովը պետք է լուծի, պարզ չեն: Ուստի անկախ հանձնաժողովը ներկայումս պետք է ընկալել որպես անցումային՝ ժամանակավոր կառույց, որի գոյությունը հետագայում պետք է հիմնավորվի: Արդյունքում՝ հանձնաժողովը կարող է դառնալ մասնագետներով համալրված մշտական գործող հանրային մարմին կամ դադարեցնել իր գործունեությունը՝ տեղը զիջելով համապատասխան նորաստեղծ ծառայություններին:

Այն հարցին, թե ի՞նչ բարեփոխումներ պետք է իրականացնել Հայաստանում գործող՝ պայմանական վաղաժամկետ ազատման համակարգում, մասնավորապես, անկախ հանձնաժողովի աշխատանքներում, հարցազրույցների մասնակիցներից մեկը կարծիք է հայտնել, համաձայն որի հանձնաժողովների կողմից որոշումների կայացումը օրենքով հստակ կարգավորված չէ, որոշումներն անհիմն են ու անհասկանալի: Կարծիք է հնչել նաև այն մասին, որ հանձնաժողովը պետք է ստեղծել օրենքով, ոչ թե նախագահի հրամանագրով:

Անկախ հանձնաժողովի աշխատանքների մասին նաև կարծիք է հայտնվել, համաձայն որի այդ աշխատանքներն արդյունավետ չեն, քանի որ ներկայիս պրակտիկայի համաձայն, ենթահանձնոժողովները ոչ միշտ են հանդիպում համապատասխան դատապարտյալի հետ և որոշումները կայացնում են վերադասի ցուցումի կամ սեփական գնահատականի հիման վրա:

Հարցազրույցներին մասնակցած անձանցից մեկը շեշտել է այն հանգամանքը, որ անկախ հանձնաժողովի ոչ բոլոր անդամներն ունեն անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի վերաբերյալ և առաջնորդվում են բացառապես գերատեսչական շահով: Այնինչ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանական վաղաժամկետ ազատման համակարգում պետք է աշխատեն բացառապես հատուկ կրթություն ունեցող և վերապատրաստում անցած մասնագետները, քանի որ քննարկվող տեղեկությունները և կայացվող որոշումները, որպես կանոն, խիստ մասնագիտական բնույթ ունեն:

Ինչպես արդեն նշվել է զեկույցի առաջին մասում, անկախ հանձնաժողովի կազմից ստեղծվում է առնվազն երկու անդամից բաղկացած ենթահանձնաժողով, որն այցելում է համապատասխան ՔԿՀ, մեկուսի հանդիպում է դատապարտյալի, անհրաժեշտության դեպքում ՔԿՀ պետի կամ այլ աշխատակիցների հետ, ծանոթանում դատապարտյալի անձնական գործին: Փաստորեն անկախ հանձնաժողովը հետագայում փակ քվեարկություն անցկացնելիս հիմնվում է բացառապես իր երկու անդամներից կազմված ենթահանձնաժողովի կարծիքի վրա: Այսինքն՝ անկախ հանձ-

նաժողովի ոչ բոլոր անդամներն են անձամբ ծանոթանում դատապարտյալի գործի բոլոր հանգամանքներին, որը օբյեկտիվ չափանիշների բացակայության պայմաններում ավելի է ընդգծում հանձնաժողովի կողմից որոշումների կայացման սուբյեկտիվ մոտեցումը, ինչն անթույլատրելի է:

Հետագա բարեփոխումները պետք է ավելի հասկանալի դարձնեն անկախ հանձնաժողովի դերը հասարակության համար ընդհանրապես, և ՔԿՀ-ի, դատարանների ու դատապարտյալների համար՝ մասնավորապես: Ավելին՝ եթե քաղաքականություն մշակողը կարծում է, որ նույնիսկ պրոբացիայի և այլ ժառայությունների ստեղծման ու արդյունավետ աշխատանքների դեպքում անկախ հանձնաժողովը պետք է պահպանել, ապա անհրաժեշտ է հանձնաժողովի աշխատանքը դարձնել մշտական, մասնագիտական, որը համարված կլինի անհրաժեշտ գիտելիքներ ունեցող մասնագետներով:

2.3. ԴԱՏԱՐԱՆԸ

Հարցազրույցներից պարզ դարձավ, որ դատարանները հիմնականում հիմնվում են ՔԿՀ-ի ներկայացրած տեղեկությունների՝ դատապարտյալի բնութագրում նշված տվյալների վրա, քանի որ անկախ հանձնաժողովը հավելյալ օգտակար տեղեկություն գրեթե չի ներկայացնում դատարաններին: Դատարանների կողմից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշում կայացնելիս ամենակարևոր գործոնը հստակ ձևակերպված, հրապարակված, օբյեկտիվ չափանիշների⁹ առկայությունն է, որոնցով առաջնորդվում են դատարանները: Դատական վարույթի մասով նույնպես առկա են որոշ խնդիրներ, որոնցից մեկը պայմանական վաղաժամկետ ազատման հարցի քննության նպատակով դատարանի արտագնա նիստերի անցկացումն է ՔԿՀ-ում: Հարցվածներից մեկը նշել է. «*Դատական քննության առանձնահատկությունն այն է, որ դատական նիստերը հիմնականում անցկացվում են քրեակատարողական հիմնարկում, արտագնա, ըստ էության դրանք*

9 Չափանիշների վերաբերյալ վերլուծությունը տե՛ս գեկույցի 3-րդ մասում:

դռնբաց նիստեր են: Բայց ելնելով այն հանգամանքից, որ նիստն անց է կացվում քրեակատարողական հիմնարկում, արդեն պարզ է, որ որոշակի առումով դռնբացությունը չի տարածվում ընդհանրական առումով»:

Նշված հանգամանքը խնդրահարույց է, քանի որ ըստ էության հասարակության ներկայացուցիչներն իրական հնարավորություն չունեն ներկա գտնվելու քննությանը: Պայմանական վաղաժամկետ ազատման հարցի քննության՝ դռնբաց, հասարակության ներկայացուցիչների ներկայությամբ անցկացվող դատական նիստերը կարող են ունենալ պայմանական վաղաժամկետ ազատման, դրա չափանիշների մասին հասարակությանը տեղեկացնելու նշանակություն, ինչը, ինչպես նշվել է սույն գեկույցում, պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի արդյունավետության բարձրացման նախապայմաններից է: Հասարակության ներկայացուցիչները պետք է տեղյակ լինեն, թե ի՞նչ չափանիշների հիման վրա է դատարանն ազատ արձակում պատիժն ամբողջությամբ չկրած դատապարտյալին, ի՞նչ պայմաններ է նշանակում նրա նկատմամբ: Քանի որ դատաքննության ընթացքում կարող են քննվել անձնական կամ ընտանեկան կյանքին կամ հասարակական անվտանգությանն առնչվող հարցեր, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում նշված գործերի քննությունը կամ դրա մի մասը կարող է իրականացվել դռնփակ կարգով:

Պայմանական վաղաժամկետ ազատման հարցի դատական քննության հետագա բարեփոխումների արդյունքում պետք է օրենսդրորեն հստակ սահմանել ազատման չափանիշները, հստակեցնել դատարան դատապարտյալի վերաբերյալ ստացվող տեղեկությունների բոլոր աղբյուրները, դատական նիստերի անցկացման առանձնահատկությունները, ինչպես նաև ապահովել դատական քննության մրցակցային բնույթը:

3. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԿԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանական վաղաժամկետ ազատման հարցի վերաբերյալ որոշում կայացնող մարմինները դասակարգվում են երկու խմբի՝ դատական մարմինների և հանձնաժողովների: Դատական մարմիններն իրենց հերթին տարանջատվում են մասնագիտացված դատարանների (Գերմանիա, Ֆրանսիա, Իսպանիա, Իտալիա, Բելգիա) և ընդհանուր իրավասության դատարանների (Պորտուգալիա, Ավստրիա):

Ֆրանսիայում պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ որոշում են կայացնում պատիժների կատարման գծով դատավորը և պատիժների կատարման գծով դատարանը (Juge de l'Application des Peines (JAP) և Tribunal de l'Application des Peines (TAP)): Պատիժների կատարման գծով դատավորն առաջին ատյանի դատավոր է, ով իրավասու է որոշումներ կայացնել անձին դատապարտելուց հետո ծագած հարցերի վերաբերյալ¹⁰:

Պատիժների կատարման գծով դատավորը որոշում է կայացնում, եթե նշանակվել է մինչև 10 տարի ժամկետով ազատագրվում, կամ եթե պատիժը կրելուն մնացել է մինչև 3 տարի, մյուս բոլոր դեպքերում հարցը քննում է պատիժների կատարման գծով դատարանը՝ կոլեգիալ, դատարանի նախագահի և պատիժների կատարման գծով 2 դատավորի կազմով¹¹: Որոշումները կարող են բողոքարկվել վերաքննիչ դատարան, որտեղ կարող են քննվել թե՛ փաստական և թե՛ իրավունքի հարցեր:

Բացի դատապարտյալի դիմումից, դատարանին ներկայացվում է նաև բանտային ծառայության վերականգնողական և պրոբացիայի բաժնի կողմից հաշվետվություն, որում նկարագրվում է, թե դատապարտյալն ինչ քայլեր է ձեռնարկել անազատության մեջ,

10 Ֆրանսիայի քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 712-1:

11 Նույն տեղում, հոդված 712-3:

մասնավորապես՝ արդյոք աշխատողն է, հատուցել է տուժողների վնասները կամ բուժում ստանում է ակոհոլային կամ թմրանյութերից կախվածությունից, անցնում է հոգեբանաթերապևտիկ կամ այլ բուժում: Նաև տեղեկություն է պարունակում, թե արդյոք դատապարտյալի՝ աշխատանք ունենալու և բնակության վայրի մասին նախագծերն իրատեսակա՞ն են:

Ղատական լսումները տեղի են ունենում դատախազի, բանտի վարչակազմի (բանտի պետը և այլ աշխատակիցներ) և վերականգնողական ու պրոբացիայի ծառայության անդամների մասնակցությամբ: Ղատապարտյալը ներկայացնում է գործը, իր ազատվելուց հետո ծրագրերը և պայմանական վաղաժամկետ ազատման համար դիմելու պատճառները:

Ղերմանհայում քրեական դատավարության օրենսգրքի 462ա հոդվածի համաձայն՝ պատիժների կատարումը վերահսկող դատարանն է որոշում կայացնում պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ: Այս դատարանը հիմնադրվել է 1975 թ. նպատակ ունենալով յուրաքանչյուր տարածքային դատարանում ստեղծել դատավորների պալատ, որոնք տեղյակ կլինեն իրենց տարածքում գտնվող բանտերի պայմաններից: Նման դատավորները մասնագիտանում են բանտային հարցերի շուրջ: Ցմահ դատապարտյալների, հոգեբուժական հիվանդանոցից դատապարտյալների ազատման հարցերը դատարանը քննում է կոլեգիալ՝ 3 մասնագիտացված դատավորի կազմով, մյուս դեպքերում՝ միանձնյա:

Իսպանիայում քրեակատարողական հիմնարկի նկատմամբ վերահսկողություն իրականացնող դատավորն է որոշում կայացնում պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ: Այս դատավորի հիմնական գործառույթներն են՝ կարգապահական տույժերի, պահման ռեժիմի վերաբերյալ որոշումների դեմ դատապարտյալների ներկայացրած բողոքների քննությունը, դատապարտյալների իրավունքների և հիմնարար ազատությունների երաշխավորումը, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի աշխատանքների վերահսկումը և այլն:

Բանտի վարչակազմը կարևոր նշանակություն ունի պայմանական վաղաժամկետ ազատման հարցը քննելու փուլում: Վարչա-

կազմը պարտավոր է պայմանական վաղաժամկետ ազատման ենթակա գործը կազմել և ներկայացնել դատավորին: Գործում ներառվում է դատապարտյալի կողմից կրկին հանցագործություն կատարելու ռիսկի գնահատում: Օրենսդրական դրույթների լայն մեկնաբանությունները թույլ են տալիս դատարանին չհամաձայնել բանտի ներկայացրած առաջարկությանը, սակայն գործնականում պետք է նշել, որ հիմնականում բանտի վարչակազմն է որոշում գործի ելքը: Դատավորները, որպես կանոն, գրեթե բոլոր դեպքերում հետևում են բանտի վարչակազմի առաջարկությանը:

Իտալիայում պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ նախկինում որոշում էր կայացնում արդարադատության նախարարությունը, իսկ ներկայումս՝ պատիժների կատարումը վերահսկող դատարանը:

Բելգիայում նույնպես նախկինում որոշում էր կայացնում գործադիր իշխանության ներկայացուցիչը՝ արդարադատության նախարարը, այնուհետև՝ պայմանական վաղաժամկետ ազատման հանձնաժողովը, իսկ 2007 թ.-ից ի վեր՝ ավելի քան երեք տարի, որոշում է կայացնում պատիժների կատարման դատարանը: Այս դատարանը պատճառաբանված որոշում է կայացնում դատախազին, բանտի պետին և դատապարտյալին լսելուց հետո: Կարող է մասնակցել նաև դատապարտյալի փաստաբանը: Դատարանը նաև լսում է տուժողներին, երբ նրանք նման ցանկություն են հայտնում, սակայն նրանց կարծիքը կարող է ազդեցություն ունենալ միայն պայմանների նշանակման հարցը որոշելիս: Դատարանի որոշումը կարող է բողոքարկվել: Մինչև 3 տարի ազատազրկման դատապարտված անձանց ազատ է արձակում բանտի պետը: Այս որոշումը բողոքարկման ենթակա չէ, սակայն պետք է մանրամասն պատճառաբանված լինի:

Պորտուգալիայում չկա մասնագիտացված դատարան: Բանտի վարչակազմն իր հիմնավորված կարծիքն է ուղարկում ընդհանուր իրավասության դատարան դատապարտյալի վաղաժամկետ ազատման վերաբերյալ:

Ավստրիայում Բանտային օրենքի 152 և 152«ա» հոդվածների համաձայն՝ պայմանական վաղաժամկետ ազատման մասին

որոշում է կայացնում տարածքային դատարանը՝ ըստ քրեակատարողական հիմնարկի գտնվելու վայրի:

Նիդերլանդներում և *Ֆինլանդիայում* գործում է առանձնահատուկ համակարգ:

Նիդերլանդներում դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշումը կայացնում է դատախազը, ով հարցը քննարկում է պրոբացիայի և վաղաժամկետ ազատման հարցերով վարչության ու քրեակատարողական հիմնարկի վարչակազմի հետ և կիրառում է ռիսկերի գնահատման սանդղակը՝ նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատելու համար: Դիմումը բավարարելու դեպքում դատախազը նաև որոշում է լրացուցիչ պայմաններ նշանակելու հարցը: Եթե դատախազը վճռում է, որ պետք է հետաձգել որոշում կայացնելը կամ մերժել պայմանական վաղաժամկետ ազատումը, ապա նա դիմում է դատարան, որը կայացնում է վերջնական որոշում: Փաստորեն, պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ դրական որոշում կարող է կայացնել դատախազը, իսկ բացասական որոշումը՝ միայն դատարանը:

Ֆինլանդիայում 2006 թ. Բանտի մասին օրենքի 22-րդ բաժնի 2-րդ հոդվածի համաձայն՝ պայմանական վաղաժամկետ ազատման մասին որոշումը կայացնում է բանտի պետը: Որոշումը կարող է բողոքարկվել առաջին ատյանի դատարան, սակայն դատարանի այս որոշումը բողոքարկման ենթակա չէ:

Ինչպես վերը նշվեց, պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել նաև հանձնաժողովային կարգով:

Օրինակ՝ *Խորվաթիայում* պայմանական վաղաժամկետ ազատման մասին որոշում կայացնում է հանձնաժողովը, որը բաղկացած է չորս անդամից, որոնք նշանակվում են արդարադատության նախարարի կողմից: Անդամներից մեկը քրեակատարողական վարչության կենտրոնական գրասենյակի ներկայացուցիչ է, մյուսը՝ պետական փաստաբանների գրասենյակի ներկայացուցիչ, երկու դատավոր և մեկ ոչ մշտական հիմունքներով պատիժը նշանակող դատավոր, ում ենթակա են տվյալ պատժի կրման վայրի գործեր:

Հանձնաժողովի գործունեության կարգը սահմանում է արդարադատության նախարարը¹²:

Հիմնականում անգլո-սաքսոնական իրավական համակարգի երկրներում է տարածում գտնում պայմանական վաղաժամկետ ազատման մասին որոշումներ կայացնելու հանձնաժողովային կարգը: Մասնավորապես, *Կանադայում* որոշումների կայացման բացառիկ իրավունքը պատկանում է ազգային պայմանական վաղաժամկետ ազատման հանձնաժողովին¹³: Այս հանձնաժողովը բաղկացած է ոչ ավելի, քան 45 լրիվ դրույքով և մի քանի կես դրույքով աշխատող անդամներից, որոնց նախարարի առաջարկությամբ նշանակում է Կանադայի գլխավոր նահանգապետը (կառավարիչ) համապատասխանաբար 10 և 3 տարի ժամկետով: Նշանակված անդամները պետք է ունենան կրթություն տարբեր ոլորտներում՝ իրավաբանություն, քրեաբանություն, սոցիալական աշխատանք, հոգեբանություն և այլն¹⁴:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում պայմանական վաղաժամկետ ազատման հանձնաժողովները բաղկացած են նախկին բանտային ծառայողներից կամ այլ հաստատություններում (հաճախ բանտերում) ծառայող անձանցից: 6 նահանգում հարցը լուծում է նահանգապետը խորհրդի հետ խորհրդակցելուց հետո: Հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել ազգային վերաքննիչ հանձնաժողով 30 օրվա ընթացքում: Հանձնաժողովները, որպես կանոն, գտնվում են պետական գործադիր մարմնում, և անդամներին նշանակում է նահանգապետը: Որոշում կայացնելիս հանձնաժողովը հաշվի է առնում՝

1. դատապարտյալին պահող քրեակատարողական հիմնարկի տեղեկանքները և առաջարկները,
2. դատապարտյալի նախկին դատվածությունների վերաբերյալ պաշտոնական տեղեկություններ, ներառյալ՝ նախկինում դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատման և նշանակված փորձաշրջանի մասին,

12 Խորվաթիայի քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 159:

13 Կանադայի Պայմանական վաղաժամկետ ազատման մասին օրենք, հոդված 107(1):

14 Պայմանական վաղաժամկետ ազատման հանձնաժողով, Կանադա <http://www.pbc-clcc.gc.ca/employ/gicqual-eng.shtml#3>:

3. պատիժը նշանակելիս մեղադրող դատախազի կամ պատիժ նշանակող դատավորի կողմից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ կատարված առաջարկությունները,
4. տեղեկանքներ դատապարտյալի ֆիզիկական, մտավոր և հոգեբուժական հետազոտության վերաբերյալ,
5. դատապարտյալի կատարած հանցագործությունից տուժած անձի հայտարարությունը՝ իր կրած ֆինանսական, սոցիալական, հոգեբանական և էնոցիոնալ վնասների վերաբերյալ¹⁵:

Այս հանձնաժողովների որոշումները քննադատվում են սուբյեկտիվության համար, մասնավորապես քննադատվում է այն հանգամանքը, որ հանձնաժողովների որոշումները չեն վերանայվում դատարանի կողմից¹⁶:

Մեծ Բրիտանիայում 2005 թ. ապրիլին ուժի մեջ մտավ Քրեական արդարադատության ակտը, որով որոշակի փոփոխություններ ներմուծվեցին, մասնավորապես՝ որոշակի ժամկետով դատապարտված անձանց ազատումը դարձավ պարտադիր՝ պատժի համապատասխան մասը կրելուց հետո: Այս դեպքում համապատասխան պայմաններ է նշանակում բանտի վարչակազմը: Իսկ «վտանգավոր» հանցագործությունների դեպքում պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշումները կայացնում է պայմանական վաղաժամկետ ազատման հանձնաժողովը: 2010 թ. սեպտեմբերի դրությամբ այն բաղկացած էր 255 անդամից, ի թիվս որոնց՝ 100 դատավոր և դատարանների ներկայացուցիչ, 30 հոգեբան, 15 պրոբացիայի աշխատակից և այլ անկախ անդամներ¹⁷:

Հանձնաժողովն իր գործառույթներն իրականացնում է բազմազան ընթացակարգերով՝ որոշ դեպքերում միայն գրավոր կերպ, որոշ դեպքերում բանավոր, 1 կամ 3 անդամներով՝ կիրառելով տարբեր կանոններ:

15 ԱՄՆ պայմանական վաղաժամկետ ազատման ձեռնարկ, պարբ. 2.19:

16 The Innocent Prisoner's Dilemma: Consequences of Failing to Admit Guilt at Parole Hearings, Daniel S. Medwed, 2008.

17 <http://www.justice.gov.uk/about/parole-board/parole-board-members/index.htm>.

Ներկայումս քննադատություն է հնչում պայմանական վաղաժամկետ ազատման հանձնաժողովի կողմից գործառույթների ոչ պատշաճ իրականացման առնչությամբ: Մասնավորապես, քննարկվում է հանձնաժողովի ոչ անկախ և սուբյեկտիվ լինելու հանգամանքը: 2003 թ. Քրեական արդարադատության մասին օրենքի համաձայն, որի հիման վրա ստեղծվել է գործում է հանձնաժողովը, նախատեսվում է, որ երկրի արդարադատության հարցերով քարտուղարը կարող է «ուղղորդել հանձնաժողովին, թե ինչ պետք է հաշվի առնի հանձնաժողովն իր գործառույթներն իրականացնելիս»: Հանձնաժողովը նաև պարտավոր է որոշում կայացնելիս հաշվի առնել քարտուղարի ներկայացրած «գրավոր կամ բանավոր տեղեկությունները»:

Մեծ Բրիտանիայի վերաքննիչ դատարանը «Ռ. (Բրուկն) ընդդեմ պայմանական վաղաժամկետ ազատման հանձնաժողովի»¹⁸ գործի շրջանակում քննել է հանձնաժողովի՝ գործադիր իշխանությունից անկախ լինելու խնդիրը: Այն անդրադարձել է մի շարք հարցերի, մասնավորապես այն, որ հանձնաժողովը ֆինանսավորվում է արդարադատության նախարարության կողմից, ինչը նշանակում է որ նախարարությունից անվերապահորեն անկախ չէ:

Հանձնաժողովի և դատապարտյալների նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների միջև հարաբերությունը նույնպես որոշակի խնդիրներ է ստեղծում հանձնաժողովի անկախության և օբյեկտիվ որոշումներ կայացնելու առումով:

Բանտային և պրոբացիայի ծառայությունները գործում են հանցագործների վերահսկողության ազգային ծառայության ենթակայության ներքո: Բանտային ծառայությունը հանձնաժողովին տեղեկություններ է տրամադրում, որոնց հիման վրա հանձնաժողովը որոշում է կայացնում: Տեղեկությունները ներառում են դատապարտյալների մոտ նկատվող առաջընթացը, իրականացված վերականգնողական (ռեաբիլիտացիոն) աշխատանքները, փորձագետների կարծիքները կրկին հանցագործություն կատարելու ռիսկի վերաբերյալ: Վերաքննիչ դատարանի կարծիքով՝ դատապարտյալի վերաբերյալ այս տեղեկությունների հավաքումը «ամենակարևոր փուլն է ... ռիսկի գնահատմանն ուղղված, որի հիման

18 R (Brooke) v. Parole Board [2008] EWCA Civ 29.

վրա դատապարտյալն ազատվում է կամ չի ազատվում»: Ուստի նպատակահարմար չէ, որ հանձնաժողովի նկատմամբ ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինը վերահսկողություն իրականացնի նաև այն մարմնի նկատմամբ, որը նախապատրաստում է դատապարտյալներին ազատության մեջ ապրելուն, ինչպես նաև այն մարմնի նկատմամբ, որը կարծիք է ներկայացնում դատապարտյալի ազատվելուց հետո հասարակության մեջ ապրելու վերաբերյալ: Այս մարմինների տրամադրած տեղեկությունների հիման վրա հանձնաժողովը որոշում է կայացնում: Մինևույն ժամանակ հանձնաժողովի անկախությունը վտանգվում է այն հանգամանքով, որ քարտուղարը կարող է հեռացնել հանձնաժողովի անդամին՝ գործառույթները ոչ պատշաճ կատարելու հիմքով:

Մեծ Բրիտանիայի վերաքննիչ դատարանը անդրադարձել է նաև մեկ այլ՝ վերականգնողական ծրագրեր չիրականացնելու հարցին: Դատարանը որոշել է, որ դատապարտյալների՝ անվտանգ լինելու վերաբերյալ ապացուցման բեռը կրում է քարտուղարը, քանի որ նրա պատասխանատվությամբ են իրականացվում վտանգավոր դատապարտյալների հետ տարվող աշխատանքները, որոնք ուղղված են վերափոխելու դատապարտյալներին, և այդ պատճառով նա պետք է հիմնավորի, որ առկա վտանգը վերացվել է: Նման վերականգնողական դասընթացներ չանցկացնելը հանգեցնում է այն բանի, որ դատապարտյալները չեն ազատվում շատ ավելի երկար ժամանակ, քան անհրաժեշտ է հանրության անվտանգությունն ապահովելու համար:

Պայմանական վաղաժամկետ ազատման հանձնաժողովը հակված է դառնալու «հանրային պաշտպանության դատարան», սակայն պետք է դառնա «պատիժների կատարման վերահսկողություն իրականացնող դատարան»¹⁹: Այս առումով Անգլիայում քննարկումներ են անցկացվում՝ նպատակ ունենալով հետևել եվրոպական այլ երկրների փորձին և պայմանական վաղաժամկետ ազատման որոշումների կայացման պարտականությունը դնել դատարանների վրա, որոնք, ենթադրվում է, ավելի մեծ անկախություն ունեն և կարող են օբյեկտիվորեն ու համակողմանիորեն

19 Nicola Padfield, Parole and early release: the Criminal Justice and Immigration Act 2008 changes in context, Criminal Law Review, 2009.

ուսումնասիրել բանտային ծառայության տրամադրած տեղեկությունները:

«Հ-ում պայմանական վաղաժամկետ ազատման հարցը քննարկվում է առանց դատապարտյալի համապատասխան դիմումի, սակայն պարտադիր է դատապարտյալի համաձայնությունը: Դատապարտյալի համաձայնության հարցը կարևորվում է մի շարք երկրներում, մասնավորապես՝ Գերմանիայում դատապարտյալի համաձայնության պարտադիր լինելու հանգամանքը հիմնավորվում է այն փաստով, որ պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում դատապարտյալի նկատմամբ նշանակվում են փորձաշրջան և հատուկ պայմաններ: Նշանակված փորձաշրջանի ժամկետը, որը կարող է լինել 2-5 տարի, կարող է ավելի երկար լինել, քան դատապարտյալի կողմից պատժի չկրած մասը: Այդ առումով դատապարտյալը կարող է նախընտրել կրել պատիժը՝ նշանակված պայմանները կատարելու և փորձաշրջանի ընթացքում վերահսկողության ենթարկվելու փոխարեն:

Պայմանական վաղաժամկետ ազատման հարցը կարող է քննվել դատապարտյալի դիմումի հիման վրա (Ֆրանսիա, Գերմանիա, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Կանադա) կամ մեխանիկորեն (Իսպանիա, Նիդերլանդներ, Պորտուգալիա, Խորվաթիա):

Ֆրանսիայում դատապարտյալը պետք է դիմում ներկայացնի պատիժների կատարման գծով դատավորին կամ դատարան: Ցանկալի, որ նաև ներկայացնի լրացուցիչ փաստաթղթեր, օրինակ՝ աշխատանքային պայմանագիր կամ նամակ ապագա գործատուից (եթե այդպիսիք կան): Պատիժների կատարման գծով դատավորը և դատարանը լսում են քրեակատարողական վարչության կարծիքը, դատախազի առաջարկությունները, դատապարտյալի և նրա փաստաբանի տեսակետը: Լսումները կարող են անցկացվել քրեակատարողական հիմնարկում:

Գերմանիայում նույնպես դատապարտյալը պետք է դիմում ներկայացնի տարածքային դատարաններում պատիժների կատարման հարցերով քրեական պալատ: Դատաքննությունն իրականացվում է գրավոր՝ առանց բանավոր լսումների: Դատախազը, քրեակատարողական հիմնարկի վարչակազմը, դատապարտյալը իրենց կարծիքը ներկայացնում են գրավոր, բացի այդ,

դատապարտյալն իրավունք ունի նաև բանավոր հանդես գալու, սակայն բանավոր լսում կարող է չլինել, եթե դատախազը և քրեակատարողական հիմնարկի վարչակազմը կողմ են պայմանական վաղաժամկետ ազատմանը: Դատարանը կարող է լսել դատապարտյալի վերաբերյալ փորձագետի կարծիքը, եթե քննում է ցմահ ազատազրկման դատապարտված անձի վաղաժամկետ ազատելու հարցը կամ այն անձանց հարցը, ովքեր դատապարտվել են այնպիսի հանցագործությունների համար, ինչպիսիք են, օրինակ՝ անչափահասի նկատմամբ վատ վերաբերմունքը, խոշտանգելը, սեռական ոտնձգությունները, ինչպես նաև ցանկացած անձի վտանգավոր գործիքներով/մեթոդներով (թույն, զենք) մարմնական ծանր վնասվածք պատճառելը, որը վտանգ է ներկայացրել կյանքի համար: Փորձագետը պետք է մասնավորապես կարծիք արտահայտի, թե արդյոք դատապարտյալը, հաշվի առնելով նրա կատարած հանցագործությունը, դեռևս վտանգ ներկայացնո՞ւմ է հասարակության համար: Փորձագետը դատարանում հանդես է գալիս բանավոր, և դատավարության մյուս մասնակիցները՝ դատապարտյալը, դատախազը, քրեակատարողական հիմնարկի վարչակազմը, կարող են մասնակցել այս լսումներին:

Իսպանիայում պայմանական վաղաժամկետ ազատման հարցի քննությունը պետք է սկսվի մեխանիկորեն, հակառակ դեպքում դատապարտյալը կարող է բողոք ներկայացնել:

ԱՄՆ-ում դատապարտյալի նախնական լսումը կատարվում է քննողի կողմից միանձնյա կամ 2 քննողի կողմից, ով համապատասխան ժամանակացույցի համաձայն լսում է դատապարտյալին քրեակատարողական հիմնարկում: Հարցազրույցը ձայնագրավում է: Առաջին հարցազրույցը տեղի է ունենում պայմանական վաղաժամկետ ազատման համար նախատեսված նվազագույն պատիժը լրանալուց 1 ամիս առաջ: Դատապարտյալը կարող է ներկայացուցիչ ունենալ: Քննողը դատապարտյալին 21 օրվա ընթացքում ներկայացնում է իր առաջարկությունը պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ և դրանց պատճառները: Այնուհետև լսում է անցկացնում հանձնաժողովը: Տուժողը/վկան կամ քրեական արդարադատություն իրականացնող

մարմինների ներկայացուցիչներից (օրինակ՝ ԱՄՆ փաստաբան, Անվտանգության դաշնային բյուրոյի գործակալ) կարող են ներկա գտնվել և արտահայտել իրենց բացասական կարծիքը պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ:

Որպես կանոն՝ հանձնաժողովի լսումները հրապարակային չեն: Սակայն պատշաճ հիմնավորվածության դեպքում կարող է այլ անձանց թույլատրվել ներկա գտնվել լսումներին:

Խորվաթիայում բանտի վարչակազմը պայմանական վաղաժամկետ ազատման հանձնաժողովին ներկայացնում է պայմանական վաղաժամկետ ազատման դիմումը, որի պատճենը ներկայացվում է նաև պատիժ նշանակած դատարանին: Դատարանն իր կարծիքը ներկայացնում է հանձնաժողովին: Հանձնաժողովը վերանայում է դատապարտյալի անձնական գործը, ուսումնասիրում է բանտի վարչակազմի տեսակետը և առաջարկը, հարցաքննում դատապարտյալին, ուսումնասիրում է դատարանի և սոցիալական ծառայության կարծիքները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում հարցաքննում է փորձագետների²⁰:

4. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ

4.1. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկություններն օգտակար աղբյուր են՝ հասկանալու համար, ի թիվս այլոց, թե ինչպիսին է պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի ընկալումը Հայաստանում: Հարցված դատավորների կարծիքով՝ պայմանական վաղաժամկետ ազատման հիմնական նպատակներն են՝

20 Խորվաթիայի քրեական դատավարության օրենսգիրք, հոդ. 159:

- Ուղղումը գնահատելուց հետո անձին ազատության մեջ գտնվելու հնարավորության ընձեռումը, քանի որ դա շահավետ է պետության և դատապարտյալի համար:
- Անձին ազատության մեջ լինելու հնարավորության ընձեռումը, ՔԿՀ-ի բեռնաթափումը, արդարության վերականգնումը, արդեն ուղղված անձի ազատ արձակելու հարցի լուծումը:
- Դատապարտյալի ուղղված լինելը գնահատելը, որը կապ չունի անձին խղճալու հետ:
- Պատժի նպատակներին հասնելուց հետո անձի ազատ արձակումը, սոցիալական արդարության վերականգնումը, ուղղումը:

Հարցված փաստաբանները և իրավաբանները նույն հարցին պատասխանելիս նույնպես շեշտել են դատապարտյալի ուղղումը: *«Նպատակն այն է, որ անձնավորությունը շահագրգռված լինի ուղղվելու և որպես ուղղվելու գրավական հրեն դրսևորի պատշաճ ձևով՝ վստահ լինելով, որ երբ ժամկետը լրանա, եթե նա այդ ժամանակահատվածում խախտում թույլ տված չլինի, այսինքն՝ փաստված լինի, որ նա բռնել է ուղղվելու ճանապարհը, ապա ազատ կարծակլի: Սա պատժի նպատակներին հասնելու միջոց է»:* Փաստաբաններից մեկը շեշտել է նաև, որ պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը դատապարտյալի ուղղման խթան է, ինչպես նաև օգնում է քաղաքացուն վերաինտեգրել հասարակություն: Վերջինս կարևորել է նաև նախապայմանների առկայությունը՝ որպես կրկին հանցանք կատարելու կանխարգելման միջոց: Մյուս փաստաբաններն այն կարծիքին էին, որ պայմանական վաղաժամկետ ազատումը կիրառելի է, եթե անձն արդեն ուղղվել է և պատիժը կրելու կարիք այլևս չկա:

Անկախ հանձնաժողովի որոշ անդամներ նշել են, որ պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը խթան է, որ դատապարտյալը ձգտի ուղղվել, ինչպես նաև պետության կողմից մարդասիրական քաղաքականության դրսևորում է: Նրանցից մեկը նույնպես կարևորել է ուղղման հանգամանքը՝ որպես քննարկվող ինստիտուտի հիմնական նպատակներից մեկը: Իսկ մյուսը շեշտել է այն հանգամանքը, որ այս ինստիտուտի միջոցով պարզվում է, թե

արդյոք անձը զղջում է կատարածի համար, որից հասկանալի է դառնում նրա ազատ արձակվելու հարցը:

17 հարցազրույցներից ստացված տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ Հայաստանում քննարկման առարկա ինստիտուտի ընկալումը հիմնականում հանգում է նրան, որ անձը պայմանական վաղաժամկետ ազատվում է պատժից միայն այն բանից հետո, երբ պատիժը կրելու ժամանակահատվածում արդեն «ուղղվել» է: Այսպիսով, ակնհայտ է, որ նման ընկալմամբ պայմանական վաղաժամկետ ազատումը պայմանավորվում է դատապարտյալի «ուղղման» հանգամանքով: Արդյո՞ք ընդունելի է նման ընկալումն ընդհանրապես՝ հանրային քաղաքականության տեսանկյունից, և արդյո՞ք նման ընկալումն իսկապես բխում է ՀՀ քրեական օրենսգրքից: Մասնավորապես, Քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածում ամրագրված պատժի նպատակներից մեկը պատժի ենթարկված անձի ուղղումն է, իսկ 76-րդ հոդվածի առաջին մասում ամրագրված դրույթի համաձայն՝ ազատագրվման ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա *ուղղվելու համար* նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի:

Պետք է հիշել, որ պայմանական վաղաժամկետ ազատվելիս դատապարտյալն ազատվում է *պայմանականորեն*, որի ժամանակ նրա վրա դրվում են որոշակի պարտավորություններ, և սահմանվում է վերահսկողություն: Եթե անձն ազատվել է պայմանականորեն, նշանակում է պատժի նպատակները դեռ իրականացված չեն, ներառյալ անձի «ուղղումը»: Եթե համարվեր, որ անձն արդեն ուղղվել է, ապա նրան պետք էր ազատել ոչ թե պայմանականորեն, այլ՝ վերջնական, առանց պայմանների, քանի որ նշանակված պատժի նպատակը կհամարվեր իրականացված, որի պարագայում անարդար և քաղաքականության տեսանկյունից՝ սխալ կլիներ անձին ազատագրվման մեջ պահելը կամ պայմաններով ազատելը: Այստեղից հետևում է, որ պայմանական վաղաժամկետ ազատման է ենթակա ոչ թե այն դատապարտյալը, ով արդեն «ուղղվել» է, այլ նա, որի վարքագիծը, կատարված աշխատանքների արդյունքները, ինչպես նաև կրկին հանցանք կատարելու ռիսկի կանխատեսումը ցույց են տալիս, որ պայմանական ազատվելու դեպքում օրինապահ

կյանքով ապրելու հավանականության աստիճանն ընդունելի է՝ դատապարտյալի հասարակական վերաինտեգրման և հասարակական անվտանգության ապահովման տեսանկյունից:

Կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածում սահմանված դրույթը համահունչ է վերոնշյալ տրամաբանությանը, սակայն սխալ է մեկնաբանվում և կիրառվում: Նշված նորմի՝ «Եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի» մասից չի բխում, որ դատարանը համոզվում է անձի վերջնական ուղղված լինելու հանգամանքում, որից հետո միայն որոշում է կայացնում պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ: Դատարանը պարզապես պետք է համոզվի, որ անձն այլևս կարիք չունի ՔԿՀ-ում պահվելու (պատժի մնացած մասը կրելու կարիք չունի), և կարող է ապրել հասարակության մեջ՝ կատարելով որոշակի պարտականություններ և գտնվելով վերահսկողության տակ: Գնահատման արդյունքում հնարավոր է պարզվի, որ դեռևս առկա են որոշակի ռիսկեր, սակայն պայմանականությունների ու վերահսկողության բուն և միակ նպատակը հենց այդ ռիսկերը չեզոքացնելը կամ նվազեցնելն է: Եթե դատարանը պարզի, որ անձն «ուղղվել» է, ապա պայմանների և վերահսկողության սահմանումը կդառնա ինքնանպատակ: Ուստի, 76-րդ հոդվածի համաձայն, դատարանը պարզում է երկու հանգամանք. 1) արդյոք անհրաժեշտ է, որ դատապարտյալը շարունակի կրել ազատագրկման ձևով նշանակած պատիժը, և 2) դատապարտյալի «ուղղման» աստիճանը, որից հետո կարող է եզրահանգումներ անել այն մասին, թե արդյոք կրկին հանցանք կատարելու ռիսկի հայտնաբերված մակարդակի պարագայում դատապարտյալը պե՞տք է պայմանական ազատվի: Եթե դատարանի որոշումը դրական է, ապա այն քննարկում է, թե նման պարագայում ի՞նչ պայմաններով ազատի դատապարտյալին, որպեսզի նպաստի նրա վերաինտեգրմանը հասարակություն, ինչպես նաև ապահովի հասարակական անվտանգությունը:

Հանրային պատիժների և միջոցառումների վերաբերյալ եվրոպական կանոնների²¹ համաձայն՝ նշված «պատիժներն ու միջոց-

21 Առաջարկություններ թիվ R (92) 16, ընդունվել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 1992 թ. հոկտեմբերի 19-ին:

ները հանցավորության դեմ պայքարի և ազատագրկման բացասական ազդեցություններից խուսափելու երկու կարևոր միջոցներ են»: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի մեկ այլ՝ Պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ Առաջարկությունների²² 3-րդ կետի համաձայն՝ «Պայմանական ազատումը պետք է հետապնդի դատապարտյալին ազատագրկման վայրի կյանքից դեպի հասարակության մեջ օրինապահ կյանք վարելն անցում կատարելուն աջակցելու նպատակ՝ ազատումից հետո նշանակվող պայմանների և վերահսկողություն սահմանելու միջոցով, որոնք պետք է նպաստեն այս նպատակին հասնելուն և հասարակական անվտանգության ապահովմանն ու հանցագործությունների նվազեցմանը հասարակությունում»:

Ավստրիայում նույնպես շեշտվում է, որ պայմանական ազատման ինստիտուտի երկու հիմնական նպատակներն են կրկին հանցանք կատարելու հավանականության նվազեցումը և հասարակական անվտանգության կարիքների ապահովումը: Գերմանիայում պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանները պարզում են կրկին հանցանք կատարելու հավանականությունը և հասարակական անվտանգության շահը:

Անհրաժեշտ է վերանայել Հայաստանի քրեական և քրեակատարողական իրավունքի քաղաքականությունը և սահմանել, որ պայմանական վաղաժամկետ ազատման նպատակները հասարակական անվտանգության ապահովումը և կրկին հանցանք կատարելու սպառնալիքը նվազեցումն են, որոնց կարելի է հասնել ՔԿՀ-ում դատապարտյալների հետ նպատակային և արդյունավետ աշխատանքների, ինչպես նաև վաղաժամկետ ազատելիս՝ անհատականացված պայմաններ և վերահսկողություն սահմանելու միջոցով, ինչպես նաև արդյունավետ գործող պրոբացիայի ծառայությունների առկայությամբ:

Պայմանական վաղաժամկետ ազատումը պետք է պայմանավորել ոչ թե դատապարտյալի ուղղված լինելու կամ չլինելու հանգամանքով, որն, ինչպես արդեն նշվել է, Հայաստանում պարզվում է զուտ սուբյեկտիվ կարծիքի հիման վրա, այլ

22 Rec(2003)22 Առաջարկություններ, 24 սեպտեմբերի, 2003 թ.:

դատապարտյալի՝ հասարակություն վերադառնալու և օրինապահ կյանքով ապրելու պատրաստվածության աստիճանով, իսկ հասարակությունում օրինապահ կյանքով ապրելու համար անհրաժեշտ հմտությունների զարգացումը ՔԿՀ հիմնական գործառնություններից մեկը պետք է լինի: Եթե պարզվում է, որ դատապարտյալը, կրելով պատժի պարտադիր մասը, դեռ պատրաստ չէ օրինապահ կյանքով ապրելուն, լուրջ կասկածներ կան, որ ազատվելիս կրկին հանցանք կկատարի, պետք է եզրակացնել, որ քրեակատարողական քաղաքականությունն արդյունավետ չի իրականացվել և շտկումների կարիք ունի:

4.2. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Որո՞նք են պայմանական վաղաժամկետ ազատման չափանիշները Հայաստանում: ՀՀ քրեական օրենսգրքով նման չափանիշներ սահմանված չեն: Նման պարագայում ինչպե՞ս են որոշում կայացնող մարմինները որոշում, թե որ դատապարտյալը կարող է պայմանական վաղաժամկետ ազատ արձակվել:

Հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա կարելի է ընդհանուր պատկերացում կազմել, թե ինչպես են կայացվում դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու որոշումները: Հարցվածներից մեկը նշել է, որ անկախ հանձնաժողովի որոշումներն ընդհանրապես պատճառաբանված չեն, ուստի հնարավոր չէ հասկանալ՝ դրանք արդար և հիմնավորված են, թե՞ ոչ: Միևնույն ժամանակ, ՔԿՀ-ի որոշումներն, իր կարծիքով, առավել հիմնավորված են: Պատասխանելով անկախ հանձնաժողովի կողմից կիրառվող չափանիշների վերաբերյալ հարցին՝ մեկ այլ հարցված նշել էր, որ դատապարտյալի՝ պայմանական վաղաժամկետ ազատմանը հավանություն տալու վերաբերյալ որոշումները չեն հիմնավորվում, չեն հիմնվում չափանիշների վրա և կամայական են: Նա նաև նշել է, որ համաձայն պրակտիկայի, համապատասխան ձևաթղթի վրա նշվում է դատապարտյալի անունը և ազգանունը, որին հետևում է մեկ տող՝ հավանություն տալու կամ չտալու վերաբերյալ:

Այն հարցին, թե ի՞նչ չափանիշների հիման վրա է անկախ հանձնաժողովը որոշում կայացնում դատապարտյալին դատարան ներկայացնելու կամ մերժելու վերաբերյալ, հարցվածներից մեկը նշել է՝ «*աչքաչափով*», դրանով շեշտելով որևէ սահմանված չափանիշի բացակայությունը: Մեկ այլ հարցված, պատասխանելով նույն հարցին, նշել է, որ նման չափանիշ չկա, և հավելել. «*Այն չափորոշիչները, որ դատարանի համար է նախատեսված, մենք գիտենք, ուրեմն հանձնաժողովն իրավունք չունի նույն չափանիշները քննելու վերստին, հակառակ դեպքում դուրս է գալիս, որ ինքը դատարանի նկատմամբ հսկողություն իրականացնող մարմին է: Հիմա պետք է այդ չափանիշներից դուրս չափանիշներ փնտրենք, որը նույնպես արսուրդ է: Ամեն ինչ այստեղ հանգում է կատարյալ արսուրդի: Փաստորեն ինքը չի կարող առաջ ընկնել, ասել, թե չափանիշները ճի՞շտ են, թե՞ ոչ: Ուրիշ չափանիշներ, եթե ինքը հաշվի է առնում, ոչ մի տեղ գրված չեն, ուրեմն դրանք ՔՕ-ից դուրս չափանիշներ են: Եվ եթե իրենք ներքին կանոնակարգով չափանիշներ սահմանեին, մենք կասեինք՝ ստոպ, դուք ՔՕ-ին հակասում եք, դրա համար էլ իրենք ոչինչ չեն գրել»:*

Հարցվածներից մեկը, պատասխանելով այն հարցին, թե ի՞նչ չափանիշների հիման վրա են հանձնաժողովի անդամները որոշումներ կայացնում, պատասխանել է, որ այդպիսի չափանիշներ կան՝ դրանք իրենց ներքին չափանիշներն են: Նա նաև մանրամասնել է, որ իր կարծիքով հանձնաժողովի անդամները չեն «*ների*» մանկան բռնաբարությունը և սպանությունը, իսկ «*մանր-մունր*» գյուղական և տնտեսական վեճերի դեպքում այլ կերպ կվարվեն: Նա եզրափակել է իր պատասխանը, շեշտելով, որ ունի սկզբունքներ և քվեարկելիս առաջնորդվում է դրանցով:

Հանձնաժողովի կողմից կիրառվող չափանիշների վերաբերյալ հարցված անձինք նշել են, որ նման չափանիշներ գոյություն չունեն, ուստի հանձնաժողովի անդամներն առաջնորդվում են վարչակազմի ներկայացրած բնութագրով, ինչպես նաև հանդիպում են դատապարտյալի հետ: Անկախ հանձնաժողովի անդամներից մեկը, պատասխանելով այն հարցին թե ինքն անձամբ ո՞ր դեպքերում է դեմ քվեարկում, պատասխանել է, որ դեմ կքվեարկի բռնաբարության, թմրադեղերի վաճառքի և դիտավորյալ սպանությունների

դեպքերում, իսկ «պատահական» հանցագործությունների դեպքում կողմ կքվեարկի:

Ինչպես երևում է, պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի հետ առնչություն ունեցող պաշտոնատար անձինք և մասնագետների գերակշիռ մասը կարծում են, որ անկախ հանձնաժողովն իր որոշումները կայացնում է սուբյեկտիվ դատողությունների, ներքին կարգով համաձայնեցված արժեքների հիման վրա: Դատարանները գնահատում են դատապարտյալի «ուղղումը», սակայն դատավորները հստակ չմատնանշեցին, թե ի՞նչ մեթոդով են պարզում դատապարտյալն ուղղվե՞լ է, թե՞ ոչ: Ինչպես կներկայացվի ստորև, պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի արդյունավետ գործունեության առաջին գրավականը պետք է լինի ազատման չափանիշների հստակությունը, հրապարակայնությունը և օբյեկտիվ բնույթը:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ Rec(2003) 22 Առաջարկությունների 18-րդ կետի համաձայն՝ «այն չափանիշները, որոնք ազատագրկման դատապարտված անձինք պետք է բավարարեն, որպեսզի պայմանական վաղաժամկետ ազատ արձակվեն, պետք է հստակ ձևակերպված լինեն: Դրանք պետք է նաև իրատեսական լինեն այն առումով, որ պետք է հաշվի առնեն դատապարտյալի անձը և սոցիալական ու տնտեսական հանգամանքները, ինչպես նաև վերաինտեգրման ծրագրերի առկայությունը»: Հստակ ձևակերպված չափանիշների նախ և առաջ անհրաժեշտ են, որպեսզի ազատագրկման ձևով պատիժ կրող դատապարտյալներն ի վիճակի լինեն կանխատեսել և համապատասխանաբար կարգավորել իրենց վարքագիծը: Եվ երկրորդ՝ այդ հստակությունն անհրաժեշտ է համակարգում չարաշահումների և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, ինչպես նաև համակարգի նկատմամբ հասարակական վստահություն ձևավորելու համար: Հատկանշական է նաև այն փաստը, որ նշված դրույթը, մատնանշելով վաղաժամկետ ազատման չափանիշները, միաժամանակ կարևորում է ազատվելուց հետո հասարակական կյանքին վերաինտեգրվելու ծրագրերի առկայությունը: Սա նշանակում է, որ ազատման չափանիշները պետք է նաև ուղղված լինեն ապագային, այլ ոչ թե կենտրոնանան բացառապես անցյալում տեղի ունեցած

հանգամանքների վրա: Դատապարտյալների և հասարակության վստահությունը պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի նկատմամբ կարելի է համարել այդ ինստիտուտի արդյունավետության պարտադիր նախապայման, իսկ նշված նպատակին հնարավոր չէ հասնել՝ առանց հստակ ձևակերպված, կանխատեսելի և դատապարտյալների ու հասարակության համար հասանելի չափանիշների:

Նախարարների կոմիտեի թիվ Rec(2003)22 Առաջարկությունների 3-րդ կետի համաձայն՝ պայմանական ազատման ինստիտուտը պետք է աջակցի դատապարտյալներին անցում կատարել բանտային կյանքից դեպի հասարակության մեջ օրինապահ կյանք վարելուն: Այդ անցումը պետք է ապահովվի ազատման պայմաններ և վերահսկողություն սահմանելու միջոցով, որոնք պետք է ուղղված լինեն հասարակական անվտանգության ապահովմանն ու հանցագործությունների նվազեցմանը: Պայմանական ազատման չափանիշները պետք է կիրառվեն այնպես, որ պայմանական ազատվեն այն բոլոր դատապարտյալները, որոնք բավարարում են օրինապահ քաղաքացի դառնալու նվազագույն երաշխիքները: Իշխանությունները կրում են դատապարտյալի կողմից չափանիշները բավարարած չլինելու հանգամանքի հիմնավորման բեռը²³:

Արտասահմանյան երկրների փորձի և միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանական վաղաժամկետ ազատման չափանիշները բաժանվում են երկու խմբի. 1) դատապարտյալի անցյալին և ներկային վերաբերող գործոնների գնահատում (ազատագրվման ընթացքում դատապարտյալի դրսևորած վարքագիծը, կարիքները, նրա հետ իրականացված աշխատանքների արդյունքները և այլն), 2) ապագային վերաբերող գործոնների գնահատում (պայմանական վաղաժամկետ ազատվելուց հետո կրկին հանցանք կատարելու ռիսկի կանխատեսումը):

23 Rec(2003)22, 20-րդ կետ:

4.2.1. ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ԴՐՍԵԿՈՐԱԾ ՎԱՐՔԱԳԾԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հայաստանի քրեական օրենսգիրքը չի սահմանում դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշում ընդունելու չափանիշները: Ինչպես արդեն նշվել է, ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ ազատագրկման ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: Դատարանը հաշվի է առնում նաև դատապարտյալի կողմից տուժողին պատճառած վնասը հարթելու հանգամանքը: Եթե դատարանը գտնում է, որ անձն այլևս կարիք չունի շարունակելու պատժի կրումը, ապա որոշում է կայացնում նրան պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ: Խնդիրն այն է, թե ի՞նչ հանգամանքներ է դատարանը հաշվի առնում՝ ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիքի արևկայության կամ բացակայության վերաբերյալ եզրահանգումներ անելիս: Օրենքով այդ հարցերի շրջանակը սահմանված չէ: Սակայն ինչպես արդեն վերը նշվեց, դատարանը կենտրոնանում է այն հարցի վրա, թե արդյոք պատիժը կրելու ընթացքում դատապարտյալն ուղղվե՞լ է: Թե ինչպե՞ս են դատարանները պարզում «ուղղման» հանգամանքը՝ օրենքով սահմանված չէ, ինչն առաջին հերթին նշանակում է, որ ողջ գործընթացը կանխատեսելի չէ ոչ դատապարտյալների, ոչ հասարակության համար:

Եթե գործն ուղարկվել է դատարան, դա նշանակում է, որ թե՛ վարչական հանձնաժողովը և թե՛ անկախ հանձնաժողովը կայացրել են դրական որոշումներ՝ դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ: Ուստի, պետք է ենթադրել, որ դատարանը հաշվի է առնում նշված մարմինների որոշումներում ներկայացված եզրակացությունները և դրանց հիմնավորումները, և անում իր հետևությունները: Ինչպես արդեն վերը նշվեց, դատարանները ՔԿՀ-ից ստացած տեղեկություններն առավել ամբողջական և օգտակար են համարում:

Համաձայն կառավարության թիվ 1304-Ն որոշման 14-րդ կետի՝ վարչական հանձնաժողովի կողմից դատարանին ներկայացվող միջնորդագրում, ի թիվս այլոց, նշվում են տեղեկություններ պատիժը կրելու ընթացքում դատապարտյալի դրսևորած վարքագծի և ուղղված լինելու հանգամանքի վերաբերյալ: Քանի որ միջնորդագրում նշված տեղեկությունները դատարանի կողմից կարող են դառնալ քննության առարկա և վճռորոշ նշանակություն ունենալ, անհրաժեշտ է, որ այդ տեղեկությունները լինեն օբյեկտիվ և ճիշտ: Այս առումով կարևոր է այն հարցը, թե ի՞նչ չափանիշների հիման վրա և ի՞նչ մեթոդով է գնահատվում դատապարտյալի վարքագիծը ՔԿՀ-ում, և հատկապես ինչպե՞ս է վարչական հանձնաժողովը որոշում դատապարտյալի ուղղված լինելու հանգամանքը: Ավելին, եթե վարչական հանձնաժողովն իր միջնորդագրում նշում է, որ դատապարտյալը, ըստ իր գնահատման, ուղղվել է, ապա միջնորդության վերաբերյալ բացասական որոշում կայացնելիս ի՞նչ չափանիշներով կարող է առաջնորդվել դատարանը՝ դատապարտյալի ուղղված չլինելու հանգամանքը քննարկելիս և հիմնավորելիս:

Կառավարության թիվ 1304-Ն որոշման 19-րդ կետի համաձայն՝ մինչև դատարանի նիստի կայանալը դատապարտյալի կողմից հիմնարկի ներքին կանոնակարգի խախտում կատարելու դեպքում ուղղիչ հիմնարկի վարչակազմը դրա մասին գրավոր տեղեկատվություն է ներկայացնում պատիժը կրելու վայրի դատարան: Իսկ Հայաստանի արդարադատության նախարարի 2005 թ. թիվ ՔՀ-46-Ն հրամանի 5(դ)-րդ կետի համաձայն՝ դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը քննարկելու համար պարտադիր է դատապարտյալի տույժ չունենալը: Նույն հրամանի 6-րդ կետի համաձայն՝ «Դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ... ներկայացման համար հաշվի են առնվում նրա հետ իրականացված սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների, ուղղման միջոցների ներգործության արդյունքները»:

Ղատապարտյալի հետ քրեակատարողական հիմնարկում կատարվող աշխատանքները պետք է պատրաստեն նրան ազատվելուց հետո հասարակության մեջ օրինապահ կյանք վարելուն: Այդ աշխատանքները պետք է մշակվեն հատուկ մասնագետների կողմից, լինեն անհատական, ստանդարտացված և չափելի: Եթե աշխատանքների արդյունքները չափելի չեն, ապա հնարավոր չի լինի դրանք օգտագործել՝ ղատապարտյալի վարքագիծը գնահատելու համար:

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ ազատագրվման ձևով պատիժ կրող ղատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը որոշելիս քաղաքականություն մշակողը առավել կարևորություն է տվել պատիժը կատարող հիմնարկում ղատապարտյալի դրսևորած վարքագծին: Դրսևորած վարքագծի բնույթից կախված՝ որոշ ղատապարտյալներ կարող են նույնիսկ չներկայացվել պայմանական վաղաժամկետ ազատման: Այսինքն՝ որոշումներ կայացնելիս Հայաստանում առավել կարևորվում են պայմանական վաղաժամկետ ազատման հարցը որոշելուց առաջ տեղի ունեցած հանգամանքները: Այդ վարքագիծը գնահատելիս հաշվի են առնվում կարգապահական տույժի առկայությունը կամ բացակայությունը, ղատապարտյալի հետ կատարված աշխատանքները և դրանց ներգործությունը, որի հիման վրա ՔԿՀ-ն նաև կարծիք է հայտնում ղատապարտյալի ուղղված լինելու հանգամանքի վերաբերյալ: Անցյալում տեղի ունեցած հանգամանքները՝ ղատապարտյալի վարքագիծը, նրա հետ կատարված աշխատանքները և դրանց արդյունքները, կարող են հիմք հանդիսանալ ղատապարտյալի հետագա վարքագծի վերաբերյալ կանխատեսումներ անելու համար: Սակայն կանխատեսումներ անելիս միայն կարգապահական տույժի առկայության կամ բացակայության հանգամանքը բավարար չէ, քանի որ կարգապահական խախտումները կարող են ունենալ լրջության տարբեր աստիճաններ և դրդապատճառներ:

Այսինքն՝ Հայաստանում ազատագրված ղատապարտյալի կարգապահական տույժ չունենալը պայման է, որպեսզի պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը լսի ղատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ներկայացման հարցը: Ստացվում է, որ ցանկացած, նույնիսկ ոչ լուրջ

խախտում ունենալու դեպքում դատապարտյալի՝ պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացնելու հարցը չի լսվում: Դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատման հարցը քննարկելիս ՔԿՀ-ում պահվելու ընթացքում նրա թույլ տված կարգապահական խախտումները հաշվի առնելը կարող է կանխարգելիչ ազդեցություն ունենալ դատապարտյալների համար և խրախուսել դրական վարքագիծ ՔԿՀ-ում: Սակայն միայն կարգապահական տույժ ունենալու հիմքով դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատման հարցը չլսելն արդարացված չէ և պարունակում է չարաշահումների և կոռուպցիոն ռիսկեր: ՔԿՀ-ն ամեն դեպքում պետք է իր գրավոր համաձայնությունը տված դատապարտյալներին ներկայացնի որոշում կայացնող մարմնին՝ ներկայացնելով նաև իր մանրամասն շարադրված և հիմնավորված կարծիքը: Ուստի կարգապահական խախտում ունենալն ինքնին չպետք է պայմանական վաղաժամկետ ազատման հարցը լուծելու առանձին չափանիշ հանդիսանա:

4.2.2. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ՀԵՏԱԳԱ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

Պայմանական վաղաժամկետ ազատման հարցը քննարկելիս որոշում կայացնող պաշտոնատար անձինք և մասնագետները կարող են ուշադրություն դարձնել անցյալին, այսինքն՝ հաշվի առնեն դատապարտյալի վարքագիծը հիմնարկում գտնվելու ժամանակ և/կամ ապագային, այսինքն՝ դատապարտյալի նկատմամբ նշանակվող պայմաններին և հսկողության մեխանիզմներին, որոնք պետք է դատապարտյալին ինտեգրեն հասարակական կյանք և ապահովեն հասարակական անվտանգությունը: Վերջինի առումով հատուկ կարևորություն ունեն արդյունավետ աշխատող պրոբացիայի ծառայությունները և վաղաժամկետ ազատված դատապարտյալի նկատմամբ նշանակված անհատականացված պայմանները և վերահսկողության տեսակները: Իսկ առաջինի առումով առավել կարևորվում է դատապարտյալի դրսևորած վարքագիծը հիմնարկում գտնվելու ընթացքում: Սակայն պետք է նշել, որ հիմնարկում

դատապարտյալի դրական վարքագիծը դեռ բավարար չէ գնահատելու համար նրա հետագա վարքագիծը հասարակությունում վաղաժամկետ ազատվելուց հետո: Հնարավոր է, որ հենց ամենախելացի և հարմարված դատապարտյալները ազատվելուց հետո կարողանան շրջանցել օրենքները, ինչպես հնարավոր է, որ խնդրահարույց դատապարտյալներն առավել դիմադրող լինեն, քանի որ բավարարված չեն քրեակատարողական համակարգից, սակայն կարողանում են արդյունավետ համակերպվել նոր կյանքին ազատվելուց հետո²⁴: Այստեղից հետևություն՝ հիմնարկում դրսևորած վարքագիծը չպետք է միակ կամ որոշիչ հանգամանք դիտարկվի վաղաժամկետ ազատման հարցը քննարկելիս, մինչդեռ ազատվելու դեպքում կրկին հանցանք կատարելու հիմնավորված կանխատեսումը կարող է որոշիչ հանգամանք լինել: Հիմնարկում պահվելու ընթացքում վարքագիծը, կատարված աշխատանքների արդյունքները, ինչպես նաև ազատվելուց հետո կրկին հանցանք կատարելու օբյեկտիվ, գիտական չափանիշների վրա հիմնված կանխատեսումը որոշումներ կայացնելիս պետք է օգտագործվեն և գնահատվեն միասին:

Դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատման հարցը որոշելիս արտասահմանյան մի շարք երկրներում պրոբացիայի ծառայությունները նախ և առաջ կատարում են հիմնավորված կանխատեսում՝ դատապարտյալի հետագա վարքագծի առնչությամբ: Ավելին՝ ռիսկի հետ մեկտեղ գնահատվում են նաև դատապարտյալի կարիքները, քանի որ կախված կոնկրետ դատապարտյալի կարիքներից (օրինակ՝ հմտությունների բացակայություն, կախվածությունների հաղթահարում, սոցիալական/ընտանեկան կապերի վերականգնում և այլն)՝ համապատասխան հանրային մարմինները կարող են մշակել անհատականացված այնպիսի ծրագրեր, որոնց իրականացման արդյունքում պետք է ակնկալել դատապարտյալի կողմից կրկին հանցանք կատարելու ռիսկի նվազեցում:

Չերմանիայի քրեական օրենսգրքի 57(1)-րդ հոդվածի համաձայն՝ «Դատարանը կասեցնում է ազատագրկման ձևով նշանակված պատժի հետագա մասի կրումը, եթե՝

²⁴ Nicola Padfield, Van van Zyl Smit, Frieder Dünkel, “Release from Prison”, William Publishing, 2010, էջ 308:

1. դատապարտյալը կրել է պատժի երկու երրորդը՝ նվազագույնը երկու ամիս.
2. ազատուճն արդարացված է՝ հաշվի առնելով հասարակական անվտանգության շահերը.
3. դատապարտյալը համաձայնել է»:

Վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը հաշվի է առնում, ի թիվս այլոց, դատապարտյալի անձը, նախկին կյանքը, կատարած հանցագործության հանգամանքները, ռեցիդիվի դեպքում՝ խախտման ծանրությունը, դատապարտյալի վարքագիծը բանտում, կյանքի պայմանները և այն ազդեցությունը, որ ազատումը կունենա դատապարտյալի վրա, եթե նա ազատվի:

Գերմանիայում պայմանական ազատումը կիրառվում է այն դատապարտյալների նկատմամբ, որոնց վերաբերյալ կանխատեսումը դրական է, սակայն չի պահանջվում ամբողջությամբ հերքել ռիսկի առկայությունը. ռիսկի «թուլատրելի» աստիճանը նույնպես ընդունելի կլինի²⁵: Բացասական որոշումը պետք է հիմնված լինի կոնկրետ փաստերի վրա, որոնք հանգեցնում են նրան, որ ռիսկի մեծությունը չի արդարացնում վաղաժամկետ ազատումը: Նույնիսկ լուրջ բռնարարքի դեպքում տեսական ռիսկը չի կարող արդարացնել պայմանական ազատման մերժումը²⁶: Ակնհայտ է, որ Գերմանիայում ընդունված մոտեցումն էապես տարբերվում է Հայաստանում ընդունված ընկալումից, որի համաձայն ցանկացած աստիճանի ռիսկի առկայության դեպքում դատարանները բացասական որոշում են կայացնում դատապարտյալին պայմանական ազատելու առնչությամբ:

Նիդերլանդների Թագավորությունում, օրինակ՝ չափահասների պրոբացիայի վարչությունը գնահատում է յուրաքանչյուր դատապարտյալի՝ կրկին հանցագործություն կատարելու ռիսկը և որոշում կայացնող մարմիններին տրամադրում է ռիսկի գնահատման միավոր՝ համաձայն կրկին հանցանք կատարելու գնահատման սանդղակի (Repeat Offending Assessment Scales): Այսպիսով վաղաժամկետ ազատվելուց հետո կրկին հանցանք կատարելու

25 Նույն տեղում, էջ 185:

26 Նույն տեղում, էջ 188:

զնահատուընը հիմնվում է առավել օբյեկտիվ չափանիշների վրա: Մինևույն ժամանակ մասնագետներն ընդունում են, որ եթե նույնիսկ սանդղակների արժանահավատությունն ապագայում բարելավվի, կանխատեսումներն ուղեկցվելու են անորոշություններով և սխալներով²⁷: Այնուամենայնիվ, նախապես սահմանված օբյեկտիվ չափանիշների համաձայն կատարված կանխատեսումը պետք է համարել առավել արժանահավատ և նպաստավոր հասարակական անվտանգության ապահովման առումով, քան որոշում կայացնողի խիստ սուբյեկտիվ զնահատականը՝ հիմնված հիմնարկում պահվելիս դատապարտյալի վարքագծի զնահատականի և սեփական ինտուիցիայի վրա:

Ավտորիայում հնարավոր է պատժից վաղաժամկետ ազատում այն դեպքում, երբ ենթադրվում է, որ պայմանական ազատումը դատապարտյալի վրա հետագայում հանցագործություն կատարելու առումով կունենա այն արգելակող ազդեցությունը, որն ունեւր ազատագրկման ձևով պատժի մնացած մասը կրելը²⁸: Կրկին հանցանք կատարելու վտանգը զնահատելիս հաշվի են առնվում այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են այն հանգամանքների փոփոխությունը, որոնց առկայության պարագայում դատապարտյալը կատարել էր հանցագործությունը և որի համար կրել է պատժի մի մասը, ինչպես նաև անհրաժեշտ է զնահատել դատապարտյալի նկատմամբ նշանակվող հսկողության ազդեցության արդյունավետությունը: Պետք է նաև զնահատել, թե արդյոք նշված միջոցները լրացնո՞ւմ են այն բացասական գործոնները, որոնք դեռևս կարող են առկա լինել²⁹:

Գրականության մեջ առանձնացվում են երկու խումբ գործոններ, որոնց հիման վրա ստեղծվում են կրկին հանցանք կատարելու ռիսկի զնահատման գործիքները: Դրանք են ստատիկ, այսինքն՝ կայուն, և դինամիկ, այսինքն՝ փոփոխական գործոնները: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում գործում են Offender Assessment System (OASys) և Offender Group Reconviction Scale (OGRS) համակար-

27 Նույն տեղում, էջ 311:

28 Նույն տեղում, էջ 53:

29 Նույն տեղում, էջ 53:

գերը: Ինչպես Նիդերլանդների Թագավորությունում, այդ գործիքներն օգտագործվում են պրոբացիայի ծառայությունների կողմից դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի կապակցությամբ տրամադրելով կրկին հանցանք կատարելու ռիսկի գնահատական: Ստատիկ գործոնների մեջ են մտնում դատապարտյալի տարիքը հանցագործությունը կատարելիս, նախկինում դատված լինելը, թմրամոլությունը, փոքր հասակում ունեցած բարդությունները, սեռը և ծագումը (էթնիկ պատկանելությունը): Քանի որ այս գործոնները ստատիկ են, դրանք չեն ենթարկվում միջամտության կամ ազդեցության: Մինչդեռ դինամիկ գործոնների վրա հնարավոր է ազդել: Դինամիկ գործոններն իրենց հերթին կարող են լինել դատապարտյալի շրջապատին և կլինիկական վիճակին առնչվող գործոններ: Շրջապատին առնչվող գործոններից են սոցիալական կապերի թույլ աջակցությունը կամ դրանց բացակայությունը, կրթության ոչ բավարար մակարդակը և այլն: Իսկ կլինիկական գործոնների մեջ կարող են ներառվել զանազան ազդակները վերահսկելու ունակության պակասը, կատաղությունն ու թշնամանքը կամ բուժման նկատմամբ բացասական վերաբերմունքը³⁰:

Նման ավտոմատացված և ստանդարտացված գործիքներն ունեն մի շարք առավելություններ: Դրանք ստեղծվում են մասնագետների կողմից, մասնավորապես՝ վիճակագրագետների, քրեաբանների և այլ մասնագետների, և հիմնված են օբյեկտիվ, լայնածավալ և ճիշտ դասակարգված տվյալների վրա, ինչպես նաև բացառում են սուբյեկտիվ և ինտուիտիվ գնահատականները: Սակայն գործիքի կիրառումը որքան էլ արդարացված լինի, չի բացառում սխալները: Սխալները կարող են լինել երկու տեսակի: Առաջինի դեպքում հնարավոր է, որ այն դատապարտյալը, որի վերաբերյալ կանխատեսումը ցույց է տվել կրկին հանցանք կատարելու ցածր ռիսկ՝ այնուամենայնիվ հանցագործություն կատարի: Երկրորդի դեպքում հնարավոր է իրական և լուրջ հասարակական սպառնալիք չներկայացնող դատապարտյալը գնահատվի որպես վտանգավոր: Այս առումով պետք է հիշել, որ ռիսկի գնահատումը չափազանց կարևոր է և կարող է որոշիչ ազդե-

30 Նույն տեղում, էջ 310:

ցություն ունենալ, սակայն դատապարտյալին պայմանական վաղա-
ժամկետ ազատման վերաբերյալ վերջնական որոշումն ամեն
դեպքում կայացնում է դատարանը՝ հաշվի առնելով ներկայացված
ողջ տվյալները և դատապարտյալին լսելուց հետո:

ԱՄՆ պայմանական վաղաժամկետ ազատման ձեռնարկում ման-
րամասն նկարագրված են ազատման ներկայացված դատա-
պարտյալի կողմից կրկին հանցանք կատարելու ռիսկի գնահատման
ամբողջ իրավական նորմերն ու դրանք կիրառելու ուղեցույցները:
Հանձնաժողովի մասնագետները վերլուծում են ազատման ներ-
կայացված յուրաքանչյուր դատապարտյալի տվյալները՝ համաձայն
«Կարևոր գործոնների միավոր» (Sailent Factor Score (SFS))
սանդղակի, որի արդյունքում հաշվարկում և նշանակում են միավոր:
SFS-ն բաղկացած է Ա, Բ, Գ, Դ, Ե և Ջ հատվածներից, որոնցից
յուրաքանչյուրն ունի գործոններ՝ յուրաքանչյուրի համար սահ-
մանված միավորով: Ձեռնարկը մանրամասնորեն նկարագրում է
յուրաքանչյուր գործոնի բովանդակությունը, ինչպես նաև
հաշվարկման կարգը:

Ստորև ներկայացվում է սանդղակը՝ հակիրճ տեսքով, առանց
սանդղակում ներառված գործոնների մեկնաբանության և սանդ-
ղակի կիրառման ուղեցույցների, որոնք կազմում են վերը նշված
ձեռնարկի զգալի մասը: Հետագայում Հայաստանում նման
սանդղակներ մշակելիս պետք է նաև համապատասխան
մասնագետներին տրամադրել նման ձեռնարկներ և ուղեցույցներ:

Բաժին Ա - Նախկին դատվածությունը (մեծահասակ/անչափահաս)

Չունի = 3: Մեկ = 2: Երկու կամ երեք = 1: Չորս կամ ավելին = 0:

Բաժին Բ - 30 օրից ավելի նշանակված ազատազրկում (մեծահասակ/անչափահաս)

Չունի = 2: Մեկ կամ երկու = 1: Երեք կամ ավելի = 0:

Բաժին Գ - Տարիքը վերջին հանցանքի/ազատազրկման ժամանակ

26 տարեկան կամ բարձր - երեք կամ երեքից պակաս ազատազրկում = 3
չորս նախկին ազատազրկումներ = 2
հինգ կամ ավելի ազատազրկումներ = 1

22-25 տարեկան - երեք կամ երեքից պակաս ազատազրկում = 2
չորս նախկին ազատազրկումներ = 1
հինգ կամ ավելի ազատազրկումներ = 0

20-21 տարեկան - երեք կամ երեքից պակաս ազատազրկում = 1
չորս նախկին ազատազրկումներ = 0

19 տարեկան կամ ցածր - ցանկացած թվով ազատազրկումներ = 0

Բաժին Դ - Ազատազրկված չլինելու վերջին ժամանակահատվածը (3 տարի)

Վերջին հանցագործությունը կատարելուց առաջ 3 տարվա ընթացքում չի ունեցել 30 օրը գերազանցող ազատազրկում (մեծահասակ/անչափահաս) կամ նույն ժամանակահատվածում պայմանական չի ազատվել = 1, հակառակ դեպքում = 0:

Բաժին Ե - Ներկայումս փորձաշրջանի/պայմանական ազատման/մեկուսացման/փախուստի կարգավիճակի խախտող

Վերջին հանցագործությունը կատարելուց հետո չի ունեցել փորձաշրջան անցնողի, պայմանական ազատվածի, մեկուսացվածի կամ փախուստի մեջ գտնվողի կարգավիճակ = 1, հակառակ դեպքում = 0:

Բաժին Զ - Մեծահասակ հանցագործները

Եթե հանցանքը կատարելու պահին դատապարտյալի տարիքը եղել է 41 կամ բարձր (և եթե Ա-Ե բաժինների միավորների ընդհանուր գումարը ինն է կամ պակաս) = 1, հակառակ դեպքում = 0:

Վերջնական միավոր:

Արտասահմանյան երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշում կայացնող մարմիններն իրականացնում են ազատման ենթակա դատապարտյալի հետագա վարքագծի կանխատեսում և կարիքների գնահատում: Այդ կանխատեսումն իրականացվում է տարբեր մեթոդներով: Մի շարք երկրներում որոշում կայացնող մարմնի կողմից դատապարտյալի հետագա վարքագծի կանխատեսումն իրականացվում է՝ քննարկելով և գնահատելով օրենքով սահմանված մի շարք հանգամանքներ, իսկ մյուս երկրներում՝ այդ կանխատեսումն իրականացվում է հատուկ մշակված՝ թղթային կամ էլեկտրոնային գործիքների միջոցով: Հայաստանում երկու մեթոդները կարող են արդյունավետ աշխատել, եթե ստեղծվեն անհրաժեշտ մասնագետներով համարված հանրային մարմինները և գործիքները, որոնք անհրաժեշտ են պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի արդյունավետ աշխատանքն ապահովելու համար: Նոր գործիքներ ներդնելը և կիրառելը պահանջելու են շարունակական մասնագիտական վերապատրաստում՝ դրանք օգտագործող մասնագետների համար, ինչպես նաև այդ աշխատանքները կատարելու գործնական ձեռնարկներ կամ ուղեցույցներ: Այս առումով չափազանց կարևոր է, որ գործիքները կիրառող մասնագետները զբաղվեն այդ աշխատանքով որպես հիմնական մասնագիտություն՝ բացառելով գերատեսչական շահերի առկայությունը որոշումների կայացման ընթացքում: Փորձը ցույց է տալիս, որ այս գործառնություններն արդյունավետ իրականացնում են պրոբացիայի ծառայությունները: Ուստի անհրաժեշտ է ջանքեր գործադրել՝ Հայաստանում արդյունավետ գործող պրոբացիայի ծառայություն ստեղծելու ուղղությամբ, որի դեպքում ներկայումս գործող անկախ հանձնաժողովները պահպանելու անհրաժեշտությունը պետք է նորից վերանայվի և հիմնավորվի:

4.3. ՏՈՒԺՈՂԻՆ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍԸ ՀԱՐԹԵԼԸ

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը հաշվի է առնում

նաև դատապարտվածի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը: Այս դրույթից պարզ չէ, թե դատարանն ինչպես է հաշվի առնում դատապարտյալի «ուղղված» լինելու հանգամանքը և զուգակցում այն՝ նույն դատապարտյալի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքի հետ: Տրամաբանական կլինի ենթադրել, որ դատարանը հաշվի է առնում տուժողին պատճառած վնասը հարթելու հանգամանքը միայն այն դեպքում, երբ գտնում է, որ դատապարտյալն այլևս պատիժը կրելու կարիք չունի: Հակառակ դեպքում, եթե դատարանը գտնի, որ դատապարտյալը պետք է շարունակի կրել պատիժը, այսինքն՝ չի «ուղղվել», ապա վնասը հարթելու հարցի քննարկումն անիմաստ է:

Արդյոք դատարանն իրավունք ունի՞ մերժելու պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելն այն պատճառաբանությամբ, որ տուժողին պատճառած վնասը հարթված չէ, այն դեպքում, երբ գտնում է, որ դատապարտյալն «ուղղվել» է և կարող է օրինապահ կյանք վարել հասարակությունում: Եթե այո, ապա կստացվի, որ դատարանը «ուղղված», այսինքն՝ օրինապահ քաղաքացուն, չի ազատում պատժից՝ քաղաքացիական պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով: Նման քաղաքականությունն արդարացված չէ և հակասում է պայմանական վաղաժամկետ ազատման նպատակներին: Ավելին, ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը կարող է որոշում կայացնել դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ, եթե գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: Այսպիսով, ՀՀ օրենսդիրը պայմանական վաղաժամկետ ազատումը կապել է անձի ուղղված լինելու, պատժի մնացած մասը կրելու կարիքի գնահատման հետ, ոչ թե սոցիալական արդարության վերականգնման: Այստեղից նաև հետևում է, որ պատժի և պայմանական վաղաժամկետ ազատման նպատակները ոչ միշտ են համընկնում:

Rec(2003)22 Առաջարկությունների 8-րդ կետի համաձայն՝ պայմանական ազատված դատապարտյալների կողմից կրկին հանցանք կատարելու վտանգի նվազեցման նպատակով պետք է հնարավոր դարձնել դատապարտյալների նկատմամբ այնպիսի անհատականացված պայմանների սահմանումը, ինչպիսիք են, ի

թիվս այլոց, տուժողներին փոխհատուցում վճարելը կամ այլ կերպ վնասը հարթելը: Այս դրույթից կարելի է ենթադրել, որ տուժողին պատճառառած վնասը հարթելը կարող է լինել պայմանական վաղաժամկետ ազատման պայմաններից մեկը՝ ազատվելուց հետո, ոչ թե ազատման հարցը որոշելու չափանիշներից մեկը: Այսինքն՝ բոլոր այն դատապարտյալները, որոնց հետագա վարքագծի կանխատեսումը դրական է, պետք է ազատ արձակվեն՝ անկախ այն հանգամանքից՝ ՔԿՀ-ում պահվելու ընթացքում հարթել են տուժողին պատճառառած վնասը, թե՞ ոչ:

Տուժողին հատուցելու հանգամանքը դիտարկվում է որպես պայման, այլ ոչ թե չափորոշիչ:

Պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում նշանակվող ընդհանուր պայմանն այն է, որ դատապարտյալը նորից հանցագործություն չկատարի: Բացի այս ընդհանուր պայմանից, որը բոլոր դեպքերում առկա է, նշանակվում են նաև հատուկ պայմաններ՝ ելնելով անհատականացման սկզբունքից: Այդ պայմանների մեջ կարող է ներառվել տուժողին հատուցելու պայմանը³¹: Օրինակ՝ Ֆրանսիայում ՔԴՕ 535-537-րդ հոդվածներով սահմանվում են դատապարտյալի նկատմամբ պայմանական վաղաժամկետ ազատվելու դեպքում նշանակվող պայմանները, որոնց մեջ ներառված է տուժողին հատուցելու պայմանը:

Տուժողին պատճառառած վնասը հարթելը կարող է սահմանվել որպես պայմանական վաղաժամկետ ազատման որոշումը կայացնելիս նշանակվող պայմաններից մեկը, սակայն այս պայմանի սահմանումը չպետք է մեխանիկական լինի: Այսինքն՝ նման պայման սահմանելիս որոշում կայացնող մարմինը պետք է հաշվի առնի դատապարտյալի ֆինանսական և սոցիալական դրությունը, վնասը հարթելու համար անհրաժեշտ միջոցների առկայությունը կամ դատապարտյալի կողմից դրանք ստեղծելու իրական հնարավորությունն ազատության մեջ: Սակայն եթե պարզվեց, որ վնասի չափը մեծ է, իսկ դատապարտյալը չունի նման միջոցներ ստեղծելու իրական հնարավորություն, սակայն նրա վերաբերյալ կայացվել է հետագա վարքագծի դրական կանխատեսում, նա այնուամենայնիվ պետք է ազատ արձակվի, քանի որ այս ինստիտուտի հիմնական

31 Peter J.P. Tak, Concepts of Early Release in Western Europe, էջ 9:

նպատակը հասարակական անվտանգության ապահովումն է, որն իրականացվում է դատապարտյալին հասարակությունում օրինապահ կյանք վարելուն աջակցելու միջոցով: Այսինքն՝ դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելը մերժելու միակ կամ որոշիչ գործոնը չպետք է լինի տուժողին պատճառած վնասը հարթելու հանգամանքը:

Անհրաժեշտ է ուսումնասիրել և ներդնել պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշում կայացնելիս տուժողին լսելու ինստիտուտը: Տուժողի հայտնած տեղեկությունները կարող են աջակցել որոշում կայացնողին՝ պայմանական ազատվող դատապարտյալի նկատմամբ առավել ճիշտ պայմաններ նշանակելու հարցում:

5. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼԸ ԵՎ ԱԶԱՏՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼԸ

Պայմանական վաղաժամկետ ազատման հիմնական նպատակը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու համար դատապարտյալին հասարակական կյանք վերաինտեգրելը, իրականացվում է յուրաքանչյուր դատապարտյալի անհատական հանգամանքները հաշվի առնելով անհատականացված և մասնագետների կողմից մշակված պայմաններ և վերահսկողության ձևեր նշանակելու միջոցով: Այս առումով չափազանց կարևոր է, որ դատապարտյալը նախապես տեղեկանա, թե ի՞նչ պայմաններ են նշանակվելու պայմանական ազատվելիս, և վերահսկողության ի՞նչ ձևեր են կիրառվելու: Նշանակվող պայմանները և դրանց չիտտելու հետևանքները պետք է պարզ և հասկանալի լինեն դատապարտյալի համար³², որպեսզի նա ի վիճակի լինի նախ տալ իր

³² Հանրային պատիժների և միջոցների եվրոպական կանոնների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (92) 16 Առաջարկություններ, կանոն 76, 19 հոկտեմբերի 1992 թ.:

համաձայնությունը՝ պայմանական վաղաժամկետ ազատվելու համար, Երկրորդ՝ որպեսզի համաձայնություն տալու դեպքում կարողանա պահպանել այդ պայմանները և գիտակցել դրանք խախտելու հետևանքները: Պայմաններ նշանակելիս կարևոր է պայմանների անհատականացումը, ինչպես նաև նշանակվող պայմանների մասին դատապարտյալի կարծիքը լսելը և հաշվի առնելը: Եթե նա չի համաձայնում կատարել առաջարկվող պայմանները, որոնք տվյալ դատապարտյալի համար իրատեսական են, ինչպես նաև՝ հետևել առաջարկվող վերահսկողության ձևերին, ապա դատարանը կարող է մերժել պայմանական վաղաժամկետ ազատումը:

Պետք է դատապարտյալի վրա դրված պայմանները կամ պարտականությունները փոփոխելու հնարավորություն ստեղծել՝ կախված դատապարտյալի ցուցաբերած առաջադիմությունից³³: Այս կանոնը ենթադրում է երկու հանգամանք. նախ՝ պայմանների և պարտականությունների կատարման նկատմամբ պետք է իրականացվի անընդմեջ և արդյունավետ վերահսկողություն, որպեսզի հնարավոր լինի գնահատել դատապարտյալի առաջադիմությունը հասարակական կյանքում: Երկրորդ՝ պայմանների կատարման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև պայմանների փոփոխումը և հարմարեցումը պետք է ձկուն լինեն: Պայմանական վաղաժամկետ ազատման վերացումը, որպես կանոն, չպետք է լինի ավտոմատացված:

Հայաստանի քրեական օրենսգիրքը նախատեսում է մի շարք հիմքեր, որոնց առկայության դեպքում դատարանը կարող է վերացնել պայմանական վաղաժամկետ ազատումը: Համաձայն քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 6-րդ մասի՝

«Եթե պատժի չկրած մասի ընթացքում դատապարտյալը՝

1. չարամտորեն խուսափում է պայմանական վաղաժամկետ ազատելիս դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները կատարելուց, ապա դատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ, որոշում է կայաց-

33 Նույն տեղում, կանոն 87:

նում պայմանական վաղաժամկետ ազատունը վերացնելու և պատժի չկրած մասն ի կատար ածելու մասին.

2. կատարում է անզգույշ հանցանք, ապա պայմանական վաղաժամկետ ազատունը պահպանելու կամ վերացնելու հարցը լուծում է դատարանը.
3. կատարում է դիտավորյալ հանցանք, ապա դատարանը նրա նկատմամբ պատիժ է նշանակում սույն օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված կանոններով: Նույն կանոններով պատիժ է նշանակվում, եթե կատարվել է անզգույշ հանցանք, և դատարանը վերացնում է պայմանական վաղաժամկետ ազատունը»:

Երկրորդ կետով նախատեսված դատարանի լիազորությունն իր բնույթով հայեցողական է, իսկ առաջին և երրորդ կետերում նշված լիազորությունները պարտադիր են, այսինքն՝ օրենսդիրն արդեն որոշել է, թե տվյալ իրավիճակներում դատարանն ի՞նչ որոշում պետք է կայացնի:

Առաջին մասով սահմանված դրույթի համաձայն՝ դատարանը որոշում է կայացնում պայմանական վաղաժամկետ ազատունը վերացնելու և պատժի չկրած մասն ի կատար ածելու մասին, երբ դատապարտյալը չարամտորեն խուսափում է պայմանական վաղաժամկետ ազատելիս դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները կատարելուց: Այս հիմքով դատարան միջնորդությունը ներկայացնում է դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը: Պայմանական վաղաժամկետ ազատման վերացումը պետք է իրականացվի պատշաճ ընթացակարգի պայմաններում և դատապարտյալին պարտադիր լսելուց հետո: Ազատման վերացումը, որպես կանոն, չպետք է կրի ավտոմատացված բնույթ:

Համաձայն Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (92) 16 Առաջարկությունների՝ ոչ լուրջ խախտումների նկատմամբ, երբ պայմանական ազատման վերացման անհրաժեշտությունը բացակայում է, վերահսկողություն իրականացնող մարմինը կարող է կիրառել հայեցողական միջոցներ, ներառյալ վարչական վարույթ, որի ընթացքում լսում է դատապարտյալին: Հավաքված տեղեկությունները ներառվում են դատապարտյալի անհատական

գործում: Լուրջ խախտումների դեպքում վերահսկողություն իրականացնող մարմինն անհապաղ գրավոր միջնորդագիր է ներկայացնում որոշում կայացնող մարմնին, որում օբյեկտիվորեն և մանրամասն շարադրվում են խախտումները, դրանք կատարելու եղանակները և այն հանգամանքները, որոնց առկայության պայմաններում դրանք թույլ են տրվել: Պայմանների փոփոխության կամ պայմանական ազատման վերացման վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը հանդգնում է, որ դատապարտյալը տեղյակ է իր դեմ ներկայացված փաստաթղթերի բովանդակությանը և կարող է հայտնել իր կարծիքը³⁴:

Նշանակված պայմանների կամ պարտականությունների փոփոխության կամ հարմարեցման հնարավորություն ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում, ինչը համակարգի բացթողումներից է, քանի որ հնարավոր են դեպքեր, երբ պայմանի կամ պարտականության փոփոխությունն առավել արդյունավետ միջոց համարվի, քան պայմանական ազատման վերացումը: Ուստի Հայաստանում պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի բարեփոխումները պետք է ներառեն նաև դատարանի՝ պայմաններ նշանակելու, փոփոխելու և վերացնելու լիազորությունների զնախատումը, ինչպես նաև ազատման մասին որոշում կայացնելիս նշանակվող պայմանների և վերահսկողության տեսակների ու ձևերի հետագա զարգացումը:

6. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Զեկույցի պատրաստման համար իրականացված հետազոտական աշխատանքները ցույց են տալիս, որ Հայաստանում գործող՝ պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը լուրջ բարեփոխման կարիք ունի: Անհրաժեշտ է փոփոխություններ կատարել մի շարք իրավական ակտերում, ստեղծել նոր հանրային մարմիններ՝ համալրված նոր մասնագետներով, բարեփոխել

³⁴ Նույն տեղում, գլուխ X:

գործող որոշ հանրային մարմիններ՝ փոխելով նրանց կազմը, լիազորությունները կամ տրամադրելով նոր գործիքներ: Ինստիտուցիոնալ և օրենսդրական փոփոխություններից բացի, անհրաժեշտ է լուրջ աշխատանքներ իրականացնել՝ պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի նպատակների վերաբերյալ Հայաստանում ընդունված ընկալումները փոխելու ուղղությամբ:

ՔՀԻ-ի պատկերացմամբ՝ պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի բարեփոխումը և բարեփոխված համակարգի աշխատանքների արդյունավետության ապահովումը պահանջում են առնվազն մի քանի տարիների անընդմեջ աշխատանք: Մյուս կողմից՝ քանի որ համակարգի բարեփոխումը չի կարող կանգնեցնել գործող համակարգի գործունեությունը, առկա է բարեփոխումների իրականացման տարիներին պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի ամենօրյա աշխատանքները բարելավելու կարիք, ինչը նաև կապահովի սահուն անցում կատարել դեպի առավել զարգացած և ժամանակակից համակարգ: Ուստի, բարեփոխումները պայմանականորեն կարելի է բաժանել երեք փուլի.

Առաջին փուլ

Առաջին փուլում անհրաժեշտ է վերանայել ներկայումս պայմանական վաղաժամկետ ազատման համակարգում որոշում կայացնող մարմինների որոշ լիազորությունները, կազմը, ընթացակարգերը, ինչպես նաև մշակել և ներդնել նոր գործիքներ:

Այս փուլում անհրաժեշտ է պարզեցնել որոշումների կայացման եռաստիճան համակարգը: ՔԿՀ-ն անհրաժեշտ է հանել պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշում կայացնող մարմինների շարքից: Օրենքով սահմանված ժամկետը լրացած դատապարտյալի գրավոր համաձայնության դեպքում ՔԿՀ-ն պարտավոր է համապատասխան փաստաթղթերը ներկայացնել անկախ հանձնաժողովի քննարկմանը: Փաստաթղթերը պետք է ներառեն՝ ՔԿՀ ստանդարտացված կարգով իրականացրած գնահատականը՝ դատապարտյալի վարքագծի, իրականացված աշխատանքների և դրանց ներգործության արդյունքների, օրինապահ կյանքով ապրելու պատրաստվածության աստիճանի վերաբերյալ: Անկախ հանձնաժողով(ների) կազմում պետք է ներգրավվեն

մասնագետներ՝ քրեաբաններ, հոգեբաններ, հոգեբույժներ, սոցիալական աշխատողներ և այլն, որոնք պետք է ստուգեն և գնահատեն ՔԿՀ-ից ստացված տվյալները: Հանձնաժողովը պարտադիր լսում է դատապարտյալին: Արդյունքում՝ հանձնաժողովը կայացնում է պատճառաբանված եզրակացություն՝ դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատումը հավանության արժանացնելու կամ մերժելու վերաբերյալ: Բացասական եզրակացությունը պետք է մանրամասն բացատրություն պարունակի այն պատճառների, կիրառված չափանիշների, չբավարարված պայմանների վերաբերյալ, որոնք հիմք են հանդիսացել նման եզրակացություն կայացնելու համար: Եզրակացությունը ստանալուց հետո 7 օրվա ընթացքում դատապարտյալն իրավունք ունի գրավոր խնդրել ՔԿՀ-ին, որպեսզի վերջինս պայմանական վաղաժամկետ ազատման միջնորդագրով դիմի դատարան: Ազատման հարցը որոշում է դատարանը՝ արդար դատաքննության երաշխիքների պահպանմանը, մրցակցային կարգով իրականացված քննության արդյունքում: Դրական որոշման դեպքում դատարանը որոշում է պայմանների և վերահսկողության տեսակները: Բացասական որոշումը պետք է պարունակի մանրամասն պատճառաբանություն, որից պետք է պարզ լինի, թե ինչ ջանքեր պետք է գործադրի դատապարտյալը՝ հաջորդ անգամ պայմանական վաղաժամկետ ազատման հարցը քննելիս հաջողության հասնելու համար:

Երկրորդ փուլ

Այս փուլում ստեղծվում և պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի անբաժան մասն է դառնում Հայաստանի Հանրապետության պրոբացիայի ծառայությունը, որը համալրված է հատուկ ուսուցում ստացած մասնագետներով, ինչպես նաև համապատասխան իրավական ակտերի և գործիքների կիրառման բացատրական ուղեցույցներով: Պրոբացիայի ծառայությունը պետք է լինի քրեակատարողական ծառայությունից առանձին և անկախ:

Այս փուլում ՔԿՀ-ն իրականացնում է բացառապես ՔԿՀ-ում պահվելու ընթացքում դատապարտյալի դրսևորած վարքագծի, կատարված աշխատանքների և դրանց ներգործության արդյունքների գնահատումը: ՔԿՀ-ի գնահատման գործիքներն այս փուլում վերանայված և առավել կատարելագործված են: Գնահատման

արդյունքներն ուղարկվում են անկախ հանձնաժողովին: Ազատ-վելուց հետո դատապարտյալի կողմից կրկին հանցանք կատարելու ռիսկի գնահատումն իրականացնում է պրոբացիայի ծառայությունը, և առաջարկվող պայմանների հետ միասին իր հիմնավորված եզրակացությունն ուղարկում է անկախ հանձնաժողովին: Հանձնաժողովը, գնահատելով ստացված նյութերը՝ եզրակացություն է կազմում դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու կամ ազատումը մերժելու վերաբերյալ: Եզրակացությունը ստանալուց հետո 7 օրվա ընթացքում դատապարտյալն իրավունք ունի գրավոր խնդրել ՔԿՀ-ին, որպեսզի վերջինս պայմանական վաղաժամկետ ազատման միջնորդագրով դիմի դատարան: Դատարանը մրցակցային դատաքննության արդյունքում որոշում է դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը: Դրական որոշման դեպքում դատարանը որոշում է պայմանների և վերահսկողության տեսակները: Բացասական որոշումը պետք է պարունակի մանրամասն պատճառաբանություն, որից պետք է պարզ լինի, թե ինչ ջանքեր պետք է գործադրի դատապարտյալը՝ հաջորդ անգամ պայմանական վաղաժամկետ ազատման հարցը քննելիս հաջողության հասնելու համար:

Երրորդ փուլ

Վերջին փուլում պետք է երաշխավորել ՔԿՀ-ի և պրոբացիայի ծառայության արդյունավետ գործունեությունը, որի արդյունքում անկախ հանձնաժողովի գործառույթների կարիքը կարող է չլինել: Այս փուլում ՔԿՀ-ն օրենքով սահմանված տվյալներն ուղարկում է պրոբացիայի ծառայություն, որն իրականացնում է բոլոր տվյալների համապարփակ վերլուծություն, սահմանված կարգով կազմում է դատապարտյալի կողմից կրկին հանցանք կատարելու ռիսկի կանխատեսում, իսկ դրական կանխատեսման դեպքում՝ առաջարկում պայմանական վաղաժամկետ ազատման անհատական պայմանները և վերահսկողության ձևերը: Թե՛ դրական և թե՛ բացասական եզրակացությունները հանձնվում են դատապարտյալին: Եզրակացությունը պետք է պատճառաբանվի այնպես, որ դատապարտյալն ինքնուրույն կամ իրավաբանի օգնությամբ կարողանա որոշել իր հետագա գործողությունները: Դատապարտյալն ինքն է որոշում դիմե՞լ դատարան, թե՞ ոչ:

Պրոբացիայի ծառայության կողմից դրական եզրակացության դեպքում, որը պարունակում է նաև առաջարկվող պայմանները, դատապարտյալը որոշում է, թե արդյոք ցանկանո՞ւմ է նման պայմաններով ազատվել, թե՞ ոչ: Եթե այո, ապա խնդրում է ՔԿՀ-ին միջնորդագիր ուղարկել դատարան: Եթե դատապարտյալը համաձայն է առաջարկված պայմաններին կամ վերահսկողության ձևերին, ապա կարող է խնդրել ՔԿՀ-ին դիմել դատարան, որտեղ մրցակցային պայմաններում կարող է վիճարկել թե՛ պայմանները, թե՛ վերահսկողության ձևերը:

Պրոբացիայի ծառայության կողմից բացասական եզրակացության դեպքում դատապարտյալը որոշում է, թե արդյոք ցանկանո՞ւմ է դատարանում վիճարկել եզրակացության այն գնահատականները, որոնց համաձայն է: Եթե դատապարտյալը որոշում է դիմել դատարան, ապա վերջինս կայացնում է վերջնական որոշում, որը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան:

Յուրաքանչյուր փուլում պետք է նախապատրաստական աշխատանքներ իրականացվեն՝ հաջորդ փուլն իրականացնելու նպատակով: Երրորդ փուլում ներկայացված արդյունավետ գործող համակարգը, ՔՀԻ-ի ընկալմամբ, համարվում է այն ընդունելի մոդելը, որի ստեղծման ուղղությամբ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել արդեն այսօր:

Ստորև ներկայացվող առաջարկությունները վերաբերում են վերը նշված բարեփոխումների առաջին փուլին միայն, սակայն շատ առաջարկություններ նախատեսում են այնպիսի նոր ինստիտուտների և գործիքների ստեղծում, որոնք կազմում են վերջնական պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի բաղկացուցիչ մասը:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պայմանական վաղաժամկետ ազատման հիմնական սկզբունքները

- Պայմանական վաղաժամկետ ազատման հարցը որոշելիս հիմնական չափանիշը պետք է լինի այն, որ դատապարտյալի ազատումը լուրջ սպառնալիք չի ներկայացնում հասարակական անվտանգությանը:
- Պայմանական վաղաժամկետ ազատման չափանիշները պետք է լինեն հստակ ձևակերպված, հրապարակային: Այն պայմանները, որոնք պայմանական վաղաժամկետ ազատվելիս պետք է բավարարել, պետք է հասկանալի և կանխատեսելի լինեն բոլոր դատապարտյալների համար, որպեսզի պատիժը կրելու ընթացքում նրանք կարողանան ջանքեր գործադրել դրանք բավարարելու ուղղությամբ:
- Պայմանական վաղաժամկետ ազատման չափանիշները պետք է կապված լինեն ազատման հարցի քննության ժամանակ առկա իրավիճակի, դատապարտյալի հետագա վարքագծի և հասարակական անվտանգության հետ: Կատարված հանցագործությունն ինքնին չպետք է միակ որոշիչ գործոնը լինի պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշում կայացնելիս:
- Դատապարտյալի վարքագիծը և աշխատանքների արդյունքները ՔԿՀ-ում պահվելու ընթացքում գնահատում է ՔԿՀ-ն՝ նախապես մշակված համակարգով, ներառելով մասնագետների, օրինակ՝ հոգեբան, հոգեբույժ, սոցիալական աշխատող և այլն: ՔԿՀ-ն նախապես մշակված չափանիշների հիման վրա կատարում է նաև դատապարտյալի՝ օրինապահ կյանքով ապրելու պատրաստվածության աստիճանի գնահատումը:
- Հետագայում ազատման ներկայացված դատապարտյալի վարքագծի, կրկին հանցանք կատարելու ռիսկի կանխատեսումը պետք է իրականացնի պրոբացիայի ծառայությունը:

Տուժողին պատճառած վնասը հարթելը

- Տուժողին պատճառած վնասը հարթելը կարող է սահմանվել որպես պայմանական վաղաժամկետ ազատման պարտականություններից մեկը, սակայն նման պարտականություն սահմանելիս պետք է հաշվի առնել դատապարտյալի ֆինանսական և սոցիալական դրությունը, վնասը հարթելու իրական հնարավորությունը:
- Դատապարտյալի մոտ ֆինանսական միջոցների բացակայության կամ ոչ բավարար լինելու հանգամանքն ինքնին չի կարող պայմանական վաղաժամկետ ազատումը մերժելու հիմք լինել, եթե առկա է կանխատեսում, որ ազատվելուց հետո տվյալ դատապարտյալի կողմից կրկին հանցագործություն կատարելու ռիսկը բացակայում է կամ ցածր է:

ՔԿՀ-ի լիազորությունները

- ՔԿՀ մուտք գործելուց հետո յուրաքանչյուր դատապարտյալի համար կազմվում է պատժի կրման անհատական պլան, որը ներառում է դատապարտյալի կարիքների գնահատականը, նրա հետ ՔԿՀ-ում տարվող աշխատանքները, ինչպես նաև պայմանական վաղաժամկետ ազատման նախապատրաստմանն ուղղված աշխատանքները:
- Պայմանական վաղաժամկետ ազատվելու ժամկետը լրանալուց առաջ ՔԿՀ-ն յուրաքանչյուր դատապարտյալի հետ իրականացնում է հատուկ աշխատանքներ՝ նախապատրաստելով նրան վաղաժամկետ ազատմանը, ներառյալ ընտանիքի հետ կապերի վերականգնումը, աշխատանք գտնելուն ուղղված ջանքերը և այլն՝ կախված տվյալ դատապարտյալի անհատական կարիքներից, որոնք պետք է մշտապես գնահատվեն ՔԿՀ-ի կողմից: Այս աշխատանքներին կարող են ներգրավվել սոցիալական աշխատող, զբաղվածության կենտրոնների աշխատակիցներ, հոգեբան և այլ մասնագետներ:
- ՔԿՀ-ն գնահատում է դատապարտյալի հետ իրականացված բոլոր աշխատանքների ներգործության արդյունքները: Գնա-

հատուճը պետք է իրականացվի ստանդարտացված համակարգով, այսինքն՝ ՔԿՀ-ն պետք է յուրաքանչյուր դատապարտյալի վերաբերյալ հավաքի և համակարգված ձևով պահպանի տվյալներ՝ մասնագետների կողմից նախապես մշակված կարգով, իսկ գնահատելիս պետք է պատասխանի մասնագետների կողմից նախապես մշակված հարցաշարի:

- Պայմանական վաղաժամկետ ազատման համար օրենքով սահմանված ժամկետը լրանալիս ՔԿՀ-ն դատապարտյալի գործը պարտադիր կարգով ուղարկում է անկախ հանձնաժողովին, եթե առկա է նրա գրավոր համաձայնությունը: Գործը պետք է պարունակի ՔԿՀ-ի ստանդարտացված գնահատականը, սակայն կարող է պարունակել նաև ՔԿՀ-ի կողմից ազատ ձևով շարադրված հիմնավորված և պատճառաբանված հատուկ կարծիք՝ դատապարտյալի անձի, վարքագծի, ինչպես նաև ազատվելիս հասարակությունում դատապարտյալի կողմից օրինապահ կյանք վարելու պատրաստվածության աստիճանի վերաբերյալ:
- Հանձնաժողովի եզրակացությունը և դատապարտյալի գրավոր դիմումը ստանալուց հետո ՔԿՀ-ն միջնորդագիրը և դրան կից բոլոր փաստաթղթերը ուղարկում է դատարան:

Անկախ հանձնաժողով(ներ)ի կազմը

- Անկախ հանձնաժողովի կազմում պետք է լինեն մասնագետ-անդամներ, որոնց թվում՝ հոգեբաններ, իրավաբաններ, քրեաբաններ, սոցիալական աշխատողներ, քրեակատարողական բնագավառի մասնագետներ:
- Անկախ հանձնաժողովի անդամները չեն ներկայացնում գերատեսչական շահ, անկախ են, կիրառում են ՀՀ օրենսդրությունը և հիմնվում իրենց մասնագիտական գիտելիքների վրա:

Անկախ հանձնաժողովի լիազորությունները

- Հանձնաժողովը կազմում է եզրակացություն, որում ներառվում են ՔԿՀ ներկայացրած տեղեկությունների վերաբերյալ հանձնաժողովի նկատառումները: Հանձնաժողովի եզրակացությունը պետք է լինի պատճառաբանված:

- Եզրակացությունն ընդունելուց առաջ հանձնաժողովը լսում է դատապարտյալին, ինչպես նաև կարող է հրավիրել ՔԿՀ ներկայացուցչին, մասնագետների և փորձագետների:
- Բացասական եզրակացությունը դատապարտյալին տրամադրելուց հետո 7-օրյա ժամկետում դատապարտյալը կարող է միջնորդել ՔԿՀ-ին գործն ուղարկել դատարան: Այդ դեպքում ՔԿՀ-ն պարտավոր է գործն անհապաղ ուղարկել դատարան:
- Բացասական եզրակացությունը պետք է պարունակի մանրամասն շարադրված պատճառաբանություն առ այն, թե ինչու է հանձնաժողովը որոշել, որ դատապարտյալը չպետք է պայմանական վաղաժամկետ ազատ արձակվի: Նշված պատճառաբանությունը պետք է դատապարտյալին աջակցի, որպեսզի նա ձգտի շտկել այն թերությունները, որոնք մատնանշել է հանձնաժողովը՝ հաջորդ անգամ պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացվելիս առաջընթաց ցուցադրելու նպատակով:
- Դրական եզրակացությունը դատապարտյալին տրամադրելուց հետո 7-օրյա ժամկետում դատապարտյալը կարող է միջնորդել ՔԿՀ-ին դիմել դատարան:

Քննությունը դատարանում

- Նիստին պարտադիր ներկա է գտնվում դատապարտյալը, որը կարող է կարծիք հայտնել իրեն վերաբերող ցանկացած հանգամանքի վերաբերյալ, առարկել իր դեմ ներկայացված նյութերին և ապացույցներին, ներկայացնել նյութեր և ապացույցներ: Դատապարտյալը կարող է նիստին մասնակցել անձամբ կամ ներկայացուցչի միջոցով:
- Նիստին կարող են մասնակցել նաև համապատասխան ՔԿՀ-ի, ինչպես նաև անկախ հանձնաժողովի ներկայացուցիչները: Դատարանը կարող է հրավիրել մասնագետի, փորձագետի, ՔԿՀ և անկախ հանձնաժողովի անդամների:
- Դատական նիստին կարող է մասնակցել նաև դատախազը, որին ծանուցում է դատարանը: Դատախազը կարող է նաև դատարանին ներկայացնել իր գրավոր դիրքորոշումը և դրա հիմնավորումները՝ առանց նիստին ներկա գտնվելու:

- Դատարանն ուսումնասիրում է ՔԿՀ և անկախ հանձնաժողովի ներկայացրած նյութերը, դատախազի ներկայացրած դիրքորոշումը և դրա հիմնավորումները, եթե այդպիսիք ներկայացվել են դատարանին, դատական քննության ընթացքում ձեռք բերված նյութերը և կայացնում պատճառաբանված որոշում՝ դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու կամ ազատումը մերժելու վերաբերյալ:
- Դրական որոշում կայացնելիս դատարանը նշանակում է փորձաշրջան և սահմանում ազատման անհատական պայմաններն ու վերահսկողության ձևերը, որոնք պետք է հասկանալի լինեն դատապարտյալի համար:
- Մինչև դատարանի որոշում կայացնելը դատապարտյալը պետք է հնարավորություն ունենա վիճարկելու առաջարկվող պայմանները:
- Պայմանական վաղաժամկետ ազատման պայմանների փոփոխումը և վերացումը
- Օրենսդրությամբ անհրաժեշտ է նախատեսել դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելիս նշանակված պարտականությունների կատարման ընթացքի շարունակական գնահատում, ինչպես նաև վերանայման և փոփոխության հնարավորություն:
- Պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելը պետք է սահմանվի որպես վերջին, ամենախիստ միջոցը, երբ պարտականությունների տեսակների և ծավալի փոփոխությունը չի կարող ապահովել պայմանական ազատման նպատակների իրականացումը:
- Նշանակված պարտականությունների փոփոխումն ու ազատման վերացումը պետք է իրականացվեն պատշաճ ընթացակարգով, հիմնված լինեն փաստերի վրա և հաշվի առնեն ազատված դատապարտյալի կարծիքը և ֆինանսական ու սոցիալական դրությունը:



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:

Ք. Երևան, Մայաթ-Նովա 24, (գրասենյակ)

Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)

Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63

Էլ. փոստ՝ info@asoghik.am